Imastowt'iwn Yesoway ordwoy Sirak'ay

ew t'owġt' Eremiay margarêj aṙ i Babilon

Sirach

urn:nbn:de:hbz:5:1-9484

Bibl. Goussen ~~2884~~

Goussen 2884

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ

ՅԵՍՈՒԱՅ

ՈՐԴԻՈՅ ՍԻՐԱՔԱՅ

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ

ՅԵՍՈՒԱՅ

ՈՐԴՒՈՅ ՍԻՐԱՔԱՅ

ԵՒ ԹՈՒՂԹ

ԵՐԵՄԻԱՅ ՄԱՐԳԱՐԷԻ

ԱՌ

ԳԵՐԵԱԼՄՆ Ի ԲԱԲԻԼՈՆ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

——

1878

2884

EX BIBLIOTHECA UBIQ. COUSSEN.

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Աստուածխմաստն Յեսու, որ զի-
մաստութեան ղգիրս զայս գրեաց,
հայր էր Սիրաքայ։ Սա յիմաստս
աստուածային գրոց վարժեալ՝ յա-
ւել զիւրսն ևս 'ի նոսա, և եթող
որդւոյ իւրում զառակքս զայսո-
սիկ լի աստուածեղէն հանճարով։
Իսկ Սիրաքայ որդի լեալ միւս ևս
Յեսու՝ թոռն առաջնոյն, զառ 'ի
հօրէն Ժառանգեալ զհոգեբուղխ
խրատս հաւոյն իւրոյ 'ի մի գիրս
յայս շարայարեաց։ Ամք սակաւք

'ի վերայ անցեալ յեօթանասնիցն թարգմանութեան, կրտսերս այս Յեսու եկն յԵգիպտոս. և անդ ոչ սակաւ ժամանակս լեալ, պէտ անձին արար յեղուլ և զգիրս զայս 'ի յոյն բարբառ վասն որ անդ բնակեալ Հրէիցն. որ անդէտք հայրենի իւրեանց բարբառոյն՝ հելլենասիսաք լինէին։ Բայց եբրայական բնագիրն չիք արդ 'ի միջի։

Իսկ մերոց թարգմանչաց ընդ այլ աստուածային գիրս երևի անշուշտ և զսա թարգմանեալ։ Զի և առ մեզ, որպէս և առ Հրեայս, թէպէտ և ոչ ընդ յայտնապէս ընդունելիսն՝ այլ ընդ երկրորդականսն 'ի սկզբանէ հետէ պատուէին գիրքս այս։ Որպէս և մերս Սարգիս վարդապետ զառ 'ի հնոց կատարանաց զյայտնապէս ընդունելիսն յոչ այնպիսեացն զանազանելով, ասէ. « Առ սոսա որք երկբայութիւն ունին՝ են սոքա, Յեսու Սիրաքայն » և այլն։ Վասն որոյ և Սիոն Կաթողիկոս 'ի Ժողովն Պարտաւայ այսպէս օրինադրէ.

«Եւ արտաքուստ պատգամաւորեսցի յուսուցանել զՀերմանկուն զուսումն բազմամամն՝ Սիրաքայ իմաստութիւնն »։

Արդ գրչագիրք մատիւրագոյնք գոլով 'ի համառօտել զաշխատուն իւրեանց, զերկրորդականոնսն ոչ միշտ ընդ նախականոնս օրինակէին, որպէս յայտ է. որով և ըզ Մակաբայեցիսն, ոչ միայն զերրորդն՝ այլ և զառաջինն և զերկրորդն, են՝ որք անխղճաբար համառօտելով գրչագրեն։ Ըստ սմին օրինակի յաճախ և զսա 'ի կարգէ աստուածային գրոցն 'ի բաց թողլով, յանցանել ժամանակաց եղև կորնչել 'ի սպառ հոգեղէն պատգամաց գրոցս, որպէս զի առ յապայ եկելոց հարցն մերոց միւսանգամ ձեռնարկել 'ի թարգմանութիւն սորին։

Բայց և երկրորդս այս թարգմանութիւն գրեթէ առաջնոյն հանդիպեալ բաղդի՝ թերի եհաս առ մեզ։ առաւել ևս հաստատելով զկարծիս քննողաց՝ թէ գոյին աւրեմն և

առ 'ի նախնի թարգմանչացն մեր-
ոց և կամ 'ի նոցին աշակերտացն
թարգմանեալ գիրքս այս, և կո-
չեան։ Այլ նովին իսկ և զգիւտ
սորին անյուսալի առնէր՝ ցուցանե-
լով զայն 'ի բազում ժամանակաց
հետէ կորուսեալ։

Իսկ բարեխանձ փոյթ ազգա-
սիրի և ուսումնասիրի առն, ըզ-
բազմատենչալին զնախնոյ թարգ-
մանութեանն օրինակ գտեալ, ըն-
ծայեաց 'ի Հռոմ թիւն մատենա-
դարանիս մերոյ՝ գանձ պատուա-
կան։ Զոր և արդ 'ի տիպ արձա-
նացուցանեմք 'ի յաւէրժ յիշատակ
պարգևողին, և յօգուտ հոգեսի-
րաց մանկանց եկեղեցւոյ. որք և 'ի
սմա ոչ ինչ նուազ քան յայլ աս-
տուածային գիրսն՝ զամենահամ
մանանային զհոգեսնունդ գտցեն
զձաշակ։

Եւ զի անշուշտ սա և առ 'ի նախ-
նի հարցն մերոց գոյր թարգմա-
նեալ, և թէ սա նոյն ինքն է առ
'ի նոցանէ թարգմանեալն, վկայեն
ոչ միայն երանելւոյն Խոսրովայ

և որդւոյ նորին աստուածայնոյն Գրիգորի Նարեկացւոյ անդստին ածեալ վկայութիւնքն ըստ իմաստից, այլ հաւատաւ և սրբոյն Մովսէսի Խորենացւոյ յառաջին գիրս Պատմչին (ք. օրինակ) բերեալ անտի իմաստն՝ յար և նման ըստ բառից, թէ «Բարեկամ հաւատարիմ՝ դեղ կենաց» (Սիրաք. զ. 16.) Իսկ 'ի Թարգմանութիւնս մեկնութեանց Ոսկեբերանին յոլովագոյն և գտան վկայութիւնք 'ի գրոց աստի, դոյզն ինչ այլայլութեամբ բառից ածեալ, որպէս սովորութիւն իսկ է նորին Թարգմանչի և զամենայն վկայութիւնսն առեալս 'ի գրոց ըստ նմին օրինակի այլայլել: Հանդերձ այսու ամենայնիւ և նախնի ոսկեղենիկ գարուն ոչ՝ շարագրութեանն 'ի սմա երևեալ, 'ի բաց առնէ զամենայն երկբայութիւն. և մնայ մեզ աւաղել միայն զսակաւամատնեայ թերութիւն օրինակիս, քանզի պակասն 'ի սմա դլուխք քանի մի, և տունք ոմանք 'ի տեղիս տեղիս:

Զհետ գրոցս Սիրաքայ և զԵրեմիայ մարգարէի զպատասխանին առ գերեալսն 'ի Բաբիլոն զօդեմք, զոր 'ի ձեռն Բարուքայ ետ տանել առ նոսա. զի և սորայս թարգմանութիւն, որ ըստ նմին օրինակի կորուսեալն էր, գտաւ այժմ զոյգ ընդ իմաստութեամբ գրոցս Յեսուայ 'ի նմին մատենի, գրեալ 'ի թուականութեան Փրկչին 1418. և 'ի հայկազնեան թուականութեանս ՊԿԷ։

1833

ՅԵՍՈՒԱՅ

ՈՐԴԻՈՅ ՍԻՐԱՓԱՅ

ՎԱՍՆ

ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ

ԽՐԱՏՔ ՀՈԳԵՒՈՐՔ

ԳԼ. Ա.

1 Ամենայն իմաստութիւն 'ի Տեառնէ է, կայ և մնայ ընդ նմա յաւիտեան:

2 Զաւազ ծովու և զչիթս անձրևաց և զաւուրս ժամանակաց ո՞ թուեսցէ երբեք:

3 Զբարձրութիւնս երկնից և զլայնութիւն աշխարհի և զանդունդս իմաստութեան, զայն ո՞ քննեսցէ:

4 Յառաջ քան զամենայն հաստատեցաւ իմաստութիւն, զգօնութիւն և հանճար յաւիտենից էին:

6 Արմատք իմաստութեան 'ի նմա յայտնեցան:

8 Մի՛ և խմաստութիւն՝ ահեղ յոյժ, որ նստի 'ի վերայ աթոռոյ գովութեան իւրոյ։

9 Ինքն Տէր հաստատեաց զնա և ետես և թուեաց զնա, և եհեղ զնա 'ի վերայ գործոց իւրոց,

10 Ընդ ամենայն մարմնոյ ըստ պարգևի իւրում, և բաշխեաց զնա սիրելեաց իւրոց։

11 Երկիւղ Տեառն՝ փառք և պարծանք, և ուրախութիւն և պսակ ցնծութեան։

12 Երկիւղ Տեառն զուարճացուսցէ զսիրտ, և տացէ ուրախութիւն և խնդութիւն և երկայն աւուրս։

13 Որ երկնչի 'ի Տեառնէ՝ բարի եղիցի առ յապայ, և յաւուրս վախճանի իւրոյ օրհնեսցի։

16 Սկիզբն խմաստութեան երկնչիլ 'ի Տեառնէ, և ընդ հաւատացեալսն յարգանդի հաստատեցաւ ընդ նոսա. ընդ մարդկան 'ի հիմանն յաւիտենից բուսեաց, և ընդ զաւակի նոցա հաւատարիմ եղիցի։

20 Լցումն խմաստութեան երկնչիլ

էել 'ի Տեառնէ, և արբեցուցանէ զնոսա 'ի պտղոց նորա։

21 Զամենայն տուն նորա լցուցէ ցանկալեօք, և զըշտեմարանս յարդեանց նորա։

22 Պատկ իմաստութեան՝ երկիւղ Տեառն։

23 Բուսուցանէ զխաղաղութիւն և զառողջութիւն ըժշկութեան, և ետես և թուեաց։

24 Զխրատ և զգիտութիւն հանճարոյ բղխեաց, և զբանս ունելեաց նորա բարձրացոյց։

25 Արմատ իմաստութեան երկրն էել 'ի Տեառնէ, և ոստք նորա ընդ երկայն աւուրս։

28 Ոչ կարիցէ սրտմտութիւն անիրաւ արդարանալ։

29 Քանզի մէտ սրտմտութեան նորա՝ կործանումն նմին. առ ժամանակ մի յանձին կալցի երկայնամիտն, և յետոյ վերատին տացէ նմա ուրախութիւն։

30 Առ ժամանակ մի թագուսցէ զբանս իւր, և շրթունք բազմաց պատմեսցեն զիմաստութիւն նորա։

31 Ի դանձս իմաստութեան ա-
ռակք խրատու, զարշելի մեղա-
ւորին աստուածպաշտութիւն։
33 Ցանկացար իմաստութեան,
պահեա՛ զպատուիրանս Տեառն, և
պարգևեսցէ զնա քեզ։
34 Զի իմաստութիւն և խրատ՝
երկիւղ Տեառն է, և հաճութիւն
նորա հաւատք և հեզութիւն։
35 Մի ստունկաներ յերկիւղի
Տեառն, և մի մատչիր առ նա երկ-
բայ մտօք։
37 Մի կեղծաւորիր 'ի բերանս
մարդկան, և շրթանց քոց զգոյշ
լինիջիր։
38 Մի բարձրացուցաներ զքեզ,
զի մի անկանիցես և ածիցես 'ի վե-
րայ քո անարգանս, և յայտնեսցէ
Տէր զգաղտնիս քո, և 'ի մէջ ժո-
ղովրդեան կործանեսցէ զքեզ։
40 Զի ոչ մատեար առ նա եր-
կիւղիւ Տեառն, և սիրտ քո լի է
նենգութեամբ։

ԳԼ. Բ.

1 Որդեակ, եթէ մատիցես Տեառն ծառայել, պատրաստեա զանձն քո 'ի փորձութիւն։

2 Ուղղեա զսիրտ քո և համբեր, մի շփոթիր 'ի ժամանակի հարուածոց։

3 Յարեաց 'ի նա և մի հեռանար, զի աճեսցես 'ի վերջայն քո։

4 Զամենայն զինչ և գայցէ 'ի վերայ քո՝ ընկալջիր, և 'ի փոփոխմունս տառապանաց քոց՝ երկայնամիտ լեր։

5 Զի 'ի հուր փորձի ոսկի, և մարդ 'ի բովս տառապանաց։

6 Հաւատա՛ նմա, և պաշտպանեսցէ զքեզ. և ուղղեա՛ զճանապարհս քո, և յուսա՛ 'ի նա։

7 Այք երկնչիք 'ի Տեառնէ, սպասիցէք ողորմութեան նորա. և մի խոտորիք, զի մի գլորիցիք։

8 Այք երկնչիք 'ի Տեառնէ՝ հաւատացէք նմա, և ոչ սխալեսցեն վարձք ձեր։

9 Ոյք երկնչիք 'ի Տեառնէ՝ յուսացարուք 'ի բարիս, և յուրախութիւն յաւիտենից և յողորմութիւն:

11 Հայեցարուք յառաջին ազգսն և տեսէք. ո՞ հաւատաց Տեառն և յամօթ եղև:

12 Կամ ո՞ կաց ճնաց յերկիւղ Տեառն, և ընդ վայր հարաւ. կամ ո՞ կարդաց առ նա, և անտես արար զնա:

13 Վասն զի գթած և ողորմած է Տէր. և թողու զմեղս, և փրկէ 'ի ժամանակի նեղութեան:

14 Վա՛յ սրտից վատթարաց և ձեռաց լքելոց, և մեղաւորի՝ որ երկանէ յերկու շաւիղս:

15 Վա՛յ սրտի լքելոյ, զի ոչ հաւատայ. վասն այսորիկ ոչ գտցէ պաշտպանութիւն:

16 Վա՛յ ձեզ, որ կորուսէք զհամբերութիւն. և զինչ գործիցէք յորժամ այց արասցէ Տէրն:

18 Ոյք երկնչին 'ի Տեառնէ՝ ոչ ստուգանիցեն բանից նորա. և ոյք սիրեն զնա՝ պահեսցեն զճանապարհս նորա:

19 Ոյք երկնչին 'ի Տեառնէ՝ խնդրեսցեն զհաճութիւն նորա. և ոյք սիրեն զնա՝ լցցին օրինօք։

20 Ոյք երկնչին 'ի Տեառնէ՝ պատրաստեսցեն զսիրտս իւրեանց, և առաջի նորա խոնարհեցուսցեն զանձինս իւրեանց։

22 Անկցուք 'ի ձեռս Տեառն, և մի 'ի ձեռս մարդկան։

23 Զի որպէս մեծութիւն նորա, նոյնպէս և ողորմութիւն նորա։

ԳԼ. Գ.

Խրատ որդւոց։

2 Ինձ հօրս լուարուք, որդեակք. և այնպէս արարէք, զի ապրեսջիք։

3 Զի Տէր փառաւորեաց զհայր 'ի վերայ ծննդոց, և զիրաւունս մօր հաստատեաց 'ի վերայ որդւոց։

4 Որ պատուէ զհայր՝ քաւէ ըզմեղս, և որպէս ոք զի գանձիցէ՝ որ փառաւորէ զմայր իւր։

5 Որ պատուէ զհայր, ուրախ լի-

ցի յորդւոց, և յաւուրս աղօթից
իւրոց լսելի եղիցի։
6 Որ փառաւորէ զՀայր՝ երկայ-
նակեաց լիցի։
8 Որ ունկն դնէ Տեառն՝ հան-
գուսցէ զմայր իւր. որպէս աե-
րանց ծառայեսցէ ծնօղաց իւրոց։
9 Արդեամբք և բանիւք պա-
տուեա զՀայր քո, զի եկեսցէ 'ի
վերայ քո օրհնութիւն 'ի նմանէ։
11 Զի օրհնութիւն հօր * հաս-
տատէ զտունս որդւոց, և անէծք
մօր՝ խլեն զհիմունս։
12 Մի փառաւորիր յանարգանս
հօր քո, զի չեն քեզ փառք՝ հօր
անարգանք։
13 Զի փառք մարդոյ 'ի պատուէ
հօր իւրոյ լինին, և նախատինք որ-
դւոց՝ մօրն անարգութիւն է։
14 Որդեակ, զօրավիգն լեր ծե-
րութեան հօր քում. և մի տրտմե-
ցուցաներ զնա 'ի կեանս նորա։

* Յօր պակասէր հօր, եդաւ ըստ մեծ-
օր. և յոյն բնագրին։

15 Եւ թէ պակասեսցէ յիմանալոյ նորա զբանս՝ ներեա նմա, և մի անպատուեր զնա յամենայն զօրութենէ քումմէ։

16 Զի որ ողորմածութիւն տանի հօրն՝ ոչ մոռասցի առ Աստուած։

17 Եւ փոխանակ մեղայ դիզեսցի քեզ չարն, և յաւուր նեղութեան քում յիշեսցէ զքեզ 'ի վնասն. և որպէս ջեր 'ի վերայ սառին՝ այնպէս հալեսցեն մեղք քո՛ զքեզ։

18 Իբրև հայհոյիչ է Աստուծոյ՝ որ ընդ վայր հարկանէ զհայր իւր. և անիծեալ 'ի Տեառնէ՝ որ բարկացուցանէ զմայր իւր։

19 Որդեակ, զգործս քո հեզութեամբ վարեսջիր, և յարանց ընտրելոց սիրեսցիս։

20 Որչափ մեծ լիցես՝ այնչափ խոնարհեցո զանձն քո, և առաջի Տեառն գտցես շնորհս. զի մեծ է զօրութիւն Տեառն, և խոնարհաց փառաւորէ զկամարարս իւր։

22 Զդժուարագոյնսն քան զքեզ՝ մի խնդրեր. և որ ինչ բան քան զքեզ զօրագոյն լիցէ՝ մի քններ զնա.

զոր ինչ հրամայեցարն զայն զմը-
տաւ ածջիր։

23 Զի չէն ինչ քեզ պէտք գաղտ-
նեացն։

24 Աւելորդ գործոց մի լինիր
քննող, զի յաճախագոյն քան զև-
մաստութիւն մարդկան ցուցաւ
քեզ։

26 Քանզի զբազումս մոլորեցու-
ցին կարծիքն զտեարս իւրեանց, և
այնու մտածութիւն չարին սայ-
թաքեաց զմիտս. և որ սիրէ զտագ-
նապ 'ի նմին կորիցէ։

29 Զի սիրտ խիստ ծանրասցի ցա-
ւօք, և մեղաւորին յաւելցէ մեղս
'ի վերայ մեղաց։

30 Հարուածոց ամբարտաւանին
ոչ գոյ բժշկութիւն, զի բոյս չա-
րութեան արմատացոյց յինքեան։

31 Սիրտ իմաստնոյ զմտաւ ածէ
զառակ, և ունկն լսողի՝ ցանկու-
թիւն իմաստնոյ։

33 Զհուր բորբոքեալ շիջուցա-
նէ ջուր, և ողորմածութիւն՝ քա-
ւէ զմեղս։

34 Որ հատուցանէ շնորհս՝ յի-

չեաչ լեցէ առ յապայ. և 'ի ժամանակի գայթագղելոյ իւրոյ գըտցէ ձեռնկալութիւնս:

ԳԼ. Դ.

1 Որդեակ, զկեանս աղքատաց մի զլանար, և մի տար տուայտել աչաց կարօտելոյն:

2 Զանձն քաղցեալ մի տրտմեցուսցես, և մի զայրացուցաներ զայր 'ի չքաւորութեան նորա:

3 Զսիրտ առեալ մի խռովեր, և մի յապաղեցես զտուրս կարօտելոյն:

4 Զպաղատանս նեղելոյն մի մերժեր, և մի դարձուցաներ զերեսս քո 'ի մնանկէ:

5 Ի կարօտելոյն մի դարձուցաներ զակն, և մի տար տեղի մարդոյ անիծանել * զքեզ:

6 Զի յանիծանել նորա զքեզ դառնութեամբ անձին իւրոյ՝ խընդրուածոց նորա լսէ որ արարն զնա:

* Ցորինակին անիծէր:

7 Սիրելի Ժողովրդեան արաս-
ջիր զանձն քո, և մեծին խոնար-
հեցո զգլուխ քո։
8 Խոնարհեցո տնանկին զուն-
քո, և տուր նմա պատասխանի խա-
ղաղական հեզութեամբ։
9 Ապրեցո զզրկեալն 'ի ձեռանէ
հզօրին, և մի կարձմտեսցես 'ի դա-
տել զքեզ։
10 Լեր որբոց որպէս հայր, և
յառն տեղի մօր նոցա. և եղիցիս
որպէս որդի Բարձրելոյն, և սիրես-
ցէ զքեզ առաւել քան զմայր քո։
12 Իմաստութիւն զորդիս իւր
բարձրացուցց. և պաշտպանէցէ այ-
նոցիկ, որ խնդրեն զնա։
13 Որ սիրէ զնա, սիրէ զկեանս.
և որք առաւօտեն առ նա, լցցին
ուրախութեամբ։
14 Որ ունի զնա, Ժառանգեսցէ
զփառս. և ուր մտանէ նա, օրհնես-
ցէ Տէր։
16 Ոյք աղաչեն զնա, սպասա տար-
ցին որբոց, և զսիրելիս նորա սի-
րէ Տէր։
16 Որ լսէ նմա, դատեսցի զազգս.

և որ նմա միտ դնէ, բնակեսցէ յու-
սով։

17 ԵԹԷ հաւատասցէ, ժառան-
գեսցէ զնա. և 'ի գալ Յարութեան՝
եղիցին ազգ նոցա։

18 Զի կամակորս գնայ ընդ քեզ
զառաջինն։

19 Զերկիւղ և զվհատութիւն ածցէ
'ի վերայ նորա, և 'ի փորձ
արկցէ զնա խրատու իւրով մինչև
վստահացի յանձն նորա, և փոր-
ձեսցէ զնա իրաւամբք իւրովք։

20 Եւ դարձեալ ուղղակի դարձ-
ցի առ նա, և ուրախ արասցէ զնա.
և յայտնեսցէ նմա զգաղտնիս իւր։

22 ԵԹԷ մոլորեսցի՝ թողցէ զնա,
և մատնեսցէ զնա 'ի ձեռս դլոր-
ման իւրոյ։

23 Սպասեա 'ի ժամանակ, և
զգոյշ լեր 'ի չարէ. և յաղագս ան-
ձին քո՝ մի ամօթ կրեսցես։

25 Զի է ամօթ՝ որ զմեղս ածէ,
և է ամօթ՝ որ փառք է և շնորհք։

26 Մի՛ առնուր ակն անձին քոյ,
և մի պատկառեսցես 'ի գլորումն
քեզ։

28 Մի արդեւլուր զբան 'ի ժամանակի նեղութեան. զի բանիւ ծանիցի իմաստութիւն, և խրատ 'ի բանս լեզուի:

30 Մի լինիր ընդդէմ ճշմարտութեան, և վասն անարժանութեան քո ակնածեալիր:

32 Մի ամաչիր խոստովան լինել զմեղս, և մի բռնադատեր զհոսանս գետոյ. և մի ստանար առն յիմարի զանձն քո:

33 Եւ մի առնուր ակն հզօրի. մինչև 'ի մահ մարտիր յաղագս ճշմարտութեան, և տէր Աստուած մարտիցէ ընդ քո:

34 Մի լինիր յանդուգն լեզուաւ քով, և մի խօթասիրտ և լքեալ 'ի գործս քո:

35 Մի լինիր երբև զառիւծ 'ի տան քում, և մի նեղասատ ընդ ծառայս քո:

3 26 Մի լիցես յօժար յառնուլն ձեռօք, և 'ի տալն կարկամ:

Գլ. Ե.

1 Մի լինիր ապաստան յինչս քո, և մի ասիր՝ բաւական է ինձ։
2 Մի երթար զհետ անձին և զորութեան քո, և մի հպարտանար 'ի գանձս քո։ մի լինիր յանձնապաստան և ասիր՝ թէ բազում են ինչք իմ։
3 Մի ասիցես՝ թէ ո՞ յաղթահարեսցէ զիս, մի ասիր՝ թէ չար ինչ ոմ արասցէ։ զի Տէր խնդրելով խնդրեսցէ 'ի քէն վրէժ։
4 Մի ասիցես, մեղայ և զի՞նչ եղև ինձ։
5 Զի Տէր երկայնամիտ է վասն դարձի քո և քաւութեան, մի յանդերկիւղս լինիր՝ յաւելուլ մեղս 'ի վերայ մեղաց։
6 Մի ասիցես գթութիւնք նորա բազում են, զբազմութիւն մեղաց իմոց քաւեսցէ։
7 Զի ողորմութիւն և բարկութիւն 'ի նմանէ է։ և 'ի վերայ մե-

զաւորաց հանգիցէ սրտմտութիւն նորա։

8 Որդեակ, մի յապաղիցիս դառնալ առ Տէր 'ի մեղաց, զի մի առ մեղս քո մեռանիցիս։

9 Մի յուսար 'ի գանձս անիրաւ, զի ոչ օգնեսցեն քեզ յաւուր բարկութեան։

11 Մի հոսիր յամենայն հողմ, և մի գնար յամենայն շաւիղս. զի այն բաժին մեղաւորի է, և երկիւղ մարդոյ է։

12 Լիր հաստատեալ յիմաստութեան քում, և մի բան եղիցի քո։

13 Լիր արագ 'ի լուր քո, և երկայնմտութեամբ 'ի բարբառ պատասխանւոյ։

14 Եթէ գոյ 'ի քեզ իմաստութիւն, տուր պատասխանի մերձաւորի. ապա թէ ոչ, ակ քո լիցի 'ի վերայ բերանոյ քոյ։

15 Փառք և անարգութիւն 'ի խօսս, և 'ի լեզու մարդոյ՝ գլորումն նմին։

16 Մի կոչեսցիս բանսարկու, և լեզուաւ քով մի վարանիր։

17 Զի 'ի վերայ գողոյն կայ ա-
մօթ, և պարսաւանք չար 'ի վերայ
երկիւղին։
18 Մի անգէտ լինիր 'ի փոքուն
և 'ի մեծէ։

ԳԼ. Զ.

1 Եւ փոխանակ բարեկամի մի
լինիր թշնամի, զի անուն չար զա-
մօթ և զնախատինս ժառանգես-
ցէ. այսպէս մեղաւորն և երկիւղն։
2 Մի բարձրացուցաներ զքեզ 'ի
խորհուրդս անձին քոյ, զի մի յա-
փըշտակեսցի իբրև զզուարակ անձն
քոյ։
3 Զտերևն քո կերիցես, և զպը-
տուղն քո կորուսանիցես, և թո-
ղուցուս զքեզ իբրև զփայտ գօսա-
ցեալ։
4 Անձն չար կորուսանէ զտացեալ
իւր, և ոանհարութիւն թշնամեաց
արասցէ զնա։
5 Կոկորդ-քաղցրենի բազումս առ-
նէ զբարեկամս իւր. և լեզու լաւա-
խօս յաճախէ զբարեկամութիւնս։

6 Ոյք ունին ընդ քեզ խաղաղութիւն, բազումք եղիցին. իսկ խորհրդակից քո՝ մի 'ի հաղարաց*:
7 Եթէ ստանաս բարեկամ՝ փորձիւ ստացիր զնա, և մի իսկ և իսկ վստահ լինիր 'ի նա:
8 Զի է բարեկամ՝ որ 'ի ժամանակի իւրում, և ոչ կացցէ մնասցէ յաւուր նեղութեան քոյ. և է բարեկամ՝ որ շրջի 'ի թշնամութիւն, և զկարգ նախատանաց քոց յայտնեսցէ:
10 Եւ է բարեկամ՝ որ զուողէ սեղանոյ, և ոչ կացցէ առ քեզ յաւուր նեղութեան քոյ. և 'ի բարութիւնս քո եղիցի իբրև զքեզ. և 'ի վերայ ծառայից քոց համարձակեսցի:
12 Եթէ խոնարհեսցես, եղիցի ընդդէմ քո, և յերեսաց քոց թագծիցէ:
13 Ի թշնամեաց քոց մեկուսի լեր, և 'ի բարեկամաց զգոյշ լինիջիր:

*Յոր. 'ի հզօրաց, ասղէջաս ըստ յունին:

14 Բարեկամ Հաւատարիմ, ծածկոյթ հզօր. իսկ որ գտանէ զնա, եգիտ գանձ։

15 Հաւատարիմ բարեկամի ոչ գոյ փոխանակ, և ոչ կշիռ նորա լաւութեանն։

16 Բարեկամ հաւատարիմ, գեղ կենաց. և երկիւղածք Տեառն գըտցեն զնա։

17 Որ երկնչի 'ի Տեառնէ, աջողէ զբարեկամութիւնս. զի ըստ սմանէ որպէս և մերձաւոր նորա։

18 Որդեակ, 'ի մանկութենէ քումմէ խնդրեա զխրատ, և մինչև ցծերոյթ գտցես իմաստութիւն։

19 Իբրև զայն որ վարէ և սերմանէ՝ մատիր առ նա, և կաց սպասեա բարի պտղոց նորա։

20 Զի 'ի գործելն նորա՝ սակաւինչ խոնջիցես, և վաղվաղակի ուտիցես յարմտեաց նորա։

21 Իբրև զի առատար է յոյժ անխրատից, և ոչ յամէ 'ի նմա անսիրտ։

22 Իբրև զքար փորձութեան ուժոյ կայ 'ի վերայ նորա, և ոչ յամենայ 'ի բաց ընկենուլ զնա։

23 Զի իմաստութիւն ըստ անուանն
իւրոյ է, և ոչ բազմաց է յայտնի։
24 Լուր, որդեակ, և ընկալ ըզ-
խրատս, և մի մերժիր զխորհրդակ-
ցութիւնս իմ։
25 Մոյծ զոտն քո յոտնկապս նո-
րա, և 'ի շղթայս նորա զպարա-
նոց քո։
26 Խոնարհեցո զուս քո և բարձ
զնա, և մի ձանձրանար կապանաց
նորա։
27 Յամենայն անձնէ քումմէ մա-
տիր առ նա, և ամենայն զօրու-
թեամբ քով պահեա զճանապարհս
նորա։
28 Քննեա և խնդրեա, և ծանիս-
ցի քեզ. և յորժամ բռնիցես, մի
թողուցուս զնա. զի 'ի վախճանի
գտցես զհանգիստս նորա, և դարձ-
ցի 'ի քեզ ուրախութիւն։
30 Եւ հղիցին քեզ կապանքն 'ի
ծածկոյթ զօրութեան, և շղթայք
նորա 'ի պատմուճան փառաց։
31 Զի զարդ ոսկեղէն է 'ի նմա,
և կապանք նորա շաւ յակինթ։
32 Զգեստս փառաց ագցես զնա,

և պակ ցնծութեան դիցես 'ի վերայ քո։

33 Եթէ կամեսցիս, որդեակ, խրատեսջիր. և եթէ տացես զանձն քո, խորագէտ եղիցիս։

34 Եթէ սիրեսցես լսել՝ ընկալցիս, և եթէ մատուսցես զունկն քո՝ իմաստուն լինիցիս։

35 Ի բազմութեան ծերոց կացջիր, և որ իմաստունն է՝ 'ի նա յարեսջիր։ Զամենայն ասասուածեղէն պատմութիւն կամեաց լսել. և առակք հանճարոյ մի վրիպեսցեն 'ի քէն։

36 Եթէ տեսանիցես զիմաստունն, առաւօտ առնիջիր առ նա. և ըզսեռամն դրանց նորա մաշեսցէ ոտն քո։

37 Խորհեաց 'ի հրամանս Տեառն, և 'ի պատուիրանս նորա խոկասջիր հանապազ. նա հաստատեսցէ ըզսիրտ քոյ, և ցանկութիւն իմաստութեան տացէ քեզ։

ԳԼ. Է.

1 Մի առնիցես չար, և ոչ հա-
սանիցէ քեզ չար. 'ի բաց կացյան-
իրաւէն, և խոտորեսցի 'ի քէն:
3 Մի սերմաներ, որդեակ, յա-
կօս անիրաւութեան, և ոչ հին-
ձեսցես զայն եօթնապատիկ:
4 Մի խնդրեր 'ի Տեառնէ իշխա-
նութիւն, և մի 'ի թագաւորէ՝ ա-
թոռ փառաց:
5 Մի առ արդարս ունիր զանձն
քո առաջի Տեառն, և առաջի թա-
գաւորի մի ճարտարեր:
6 Մի խնդրեր լինել դատաւոր,
զուցէ ոչ կարիցես բառնալ զան-
իրաւութիւնս: Զուցէ երբեք ակն
ածիցես յերեսաց հզօրի, և դնի-
ցես գայթագղութիւն յուղղու-
թեան քում:
7 Մի մեղանչեր 'ի բազմութեան
քաղաքի, և մի ընկենուր զքեզ
յամբոխ:

8 Մի ծրարեր կրկին մեզ, զի և 'ի միջէ ոչ անպարտ * լինիցիս:

9 Մի խղճամիտ լինիր յուխտս քո, և ողորմածութիւն առնելոյ մի անփոյթ առնիցես:

11 Մի ասիցես եթէ 'ի յաճախութիւն պատարագաց իմոց հայեսցի, և 'ի մատուցանելն իմում Աստուծոյ բարձրելոյ՝ ընկալցի:

12 Մի հեգնեսցես զայր 'ի դառնութիւն անձին նորա. զի է որ խոնարհեցուցանէ և բարձրացուցանէ:

13 Մի սերմաներ ստութիւն 'ի վերայ եղբօր քոյ, և մի բարեկամի զնոյն:

14 Ստել զամենայն ստութիւն՝ մի ախորժեր. զի յաճախութիւն նորա ոչ է բարի:

15 Մի շաղփաղփիր 'ի բազմութեան ծերոց, և մի կրկներ բան 'ի յուխտս քո:

16 Մի ատիցես զգործս վաստակոյ, և զմշակութիւն՝ որ 'ի Բարձրելոյն հաստեցաւ:

* Յոր. ոչ անպիտան:

17 Մի՛ լեցիս համարեալ ընդ բազ-
մութեան մեղաւորաց. յիշեա զի
բարկութիւն Տեառն ո՛չ յամե-
նայ։

18 Խոնարհեցո յոյժ զանձն քո,
զի վրէժխնդրութիւն ամբարշտի՝
հուր և որդն։

20 Մի՛ փոխանակեր զբարեկամ
ընդ կարասւոյ, և մի՛ զեղբայր հա-
րազատ ընդ ոսկւոյն Սափիրայ։

21 Մի՛ վրեպիր 'ի կնոջէ իմաստնոյ
և բարւոյ, զի շնորհն նորա առաւել
է քան զոսկի։

22 Մի՛ չարչարեր զծառայ՝ որ
գործիցէ ճշմարտութեամբ, և մի՛
զվարձկան՝ որ տուեալ է քեզ
զանձն իւր։

23 Զծառայ իմաստուն սիրեսցէ
անձն քո, և մի՛ զրկեր զնա յազա-
տութենէ։

24 Անասուն իցէ քո, դարման
տար նոցա, և եթէ իցէ քեզ պի-
տանի՝ կացցեն առ քեզ։

25 Որդեակք իցեն քո՝ խրատեա
զնոսա, և խոնարհեցո 'ի մանկու-
թենէ զպարանոց նոցա։

26 Դատերք իցեն քո՝ զգոյշ լեր մարմնոց նոցա, և մի լըջացուցաներ առ նոսա զգէմս քո։

27 Տուր արտաքս զդուստրս քո, և եղիցես կատարեալ 'ի գործ մեծ, և առն իմաստնոյ պարգևեա զնա։

28 Կին իցէ քո ըստ միտս, մի հաներ զնա։

29 Յամենայն սրտէ քումմէ փառաւորեա զՏէր քո, և զմոր երկուսիս մի մոռանար։

30 Յիշեսջիր զի 'ի նմանէ ծնար, և զինչ հատուցես նոցա որպէս նոքա քեզ։

31 Յամենայն սրտէ քումմէ երկիր 'ի Տեառնէ, և զքահանայս նորա մեծարեա։

32 Յամենայն զօրութենէ քումմէ սիրեա զարարիչն քո, և զպաշտօնեայս նորա մի անտես առնիցես։

33 Երկիր 'ի Տեառնէ՝ և փառաւորեա զքահանայս։

34 Եւ տուր զմասն նոցա որպէս և հրամայեալ է քեզ։

35 Զպտուղ և զվասն յանցանաց,

և զտուր * երեսաց, և զզոհ սրբութեան՝ և զպտուղ սրբոց:

36 Եւ տնանկին կարկառեա ըզձեռն քո, զի կատարեալ եղիցի օրհնութիւն քո:

37 Շնորհ տրոց՝ առաջի ամենայն կենդանւոյ, և 'ի մեռելոյ մի արգելուր զշնորհս:

38 Մի զրկիր 'ի լացողաց, և ընդ սգաւորս սգացիր:

39 Մի դանդաղեր 'ի տես երթալ հիւանդին. և համարեսցի քեզ շնորհ:

Գլ. Թ.

1 Մի նախանձաբեկ առնիր զկին դրկաց քոց, և մի բուսուցանիր 'ի վերայ քո խրատ չար:

2 Մի տար կնոջ զսիրտ քո, հասանել նմա 'ի վերայ զօրութեան քոյ:

3 Մի ընդ առաջ երթար կնոջ բոզի. զի գուցէ անկանիցիս յորոգայթս նորա:

* Ցօր. զուր. ուղղեցաւ ըստ յունին:

4 Ընդ երգեցիկս մի ցանկորդիր, գուցէ ըմբռնիցիս 'ի լրբութիւնս նորա։

5 Զկոյսն մի զներ, գուցէ գայ թագղեսցիս 'ի պատուհաս նորա։

6 Մի տար պոռնկաց զանձն քո, զի մի կորուսցեն զժառանգութիւնս քո։

7 Մի յածիր ընդ փողոցս քաղաքի, և յաւերակս նորա մի թափառիր։

8 Դարձո զակնդ քո 'ի կնոջէ գեղեցկէ, և մի զներ զգեղ օտար։

9 Ի գեղեցկութենէ կնոջ բազումք մոլորեցան, և ասի սէր իբրև զհուր բորբոքէ։

12 Ընդ առնակնոջ ամենևին մի նստիր. և մի հանգանակեր ընդ նմա 'ի գինւոջ, գուցէ խոտորիցի անձն քո 'ի նմա, և հոգւով քով գայթագղեսցիս 'ի կորուստ։

14 Մի թողուր զբարեկամ հին, զի նորն ոչ է հաւասար նմա։

15 Գինի նոր՝ բարեկամ նոր. եթէ հնասցի, ուրախութեամբ արբջիր։

16 Մի նախանձիր ընդ փառս մե-

զաւորին, զի ոչ գիտեաս զինչ է կործանումն նորա։

17 Մի հաճիցես ընդ հաճութիւնս ամբարշտաց. յիշեա՛ զի մինչև 'ի դժոխս ոչ արդարացին։

18 Հեռի լեր 'ի մարդոյ՝ որ ունի իշխանութիւն սպանանելոյ, և ո՛չ կասկածիցես դու յերկիւղէ մահու։

19 Մի յանցանիցես՝ թէպէտ և մեծ իցես, զի մի բարձցէ զկեանս քո. գիտասջիր զի ընդ մէջ որոգայթից անցանիցես, և 'ի վերայ մահարձանաց քաղաքի շրջիցիս։

21 Ըստ զօրութեան քում կշռեա զմերձաւորն քո, և ընդ իմաստունս խորհեսջիր։

22 Արդարք եղիցին ճաշակիցք քո, և յերկիւղ Տեառն եղիցին պարծանք քո։

23 Ընդ հանճարեղս եղիցի զրոյց քոյ, և ամենայն պատմութիւն քո յօրէնս Բարձրելոյն։

24 Ի ձեռս ճարտարաց գովեսցի գործ, և որ առաջնորդ իցէ ժողովրդեան իմաստուն բանիւ իւրով։

25 Ահեղ 'ի քաղաքի իւրում այր
լեզուանի, և որ յանդուգն է բա-
նիւ իւրով՝ առեալ եղիցի։

ԳԼ. Ժ.

1 Դատաւոր իմաստուն խրա-
տեսցէ զժողովուրդ իւր, և առաջ-
նորդութիւն հանճարեղին կար-
գաւորեալ եղիցի։
2 Ըստ դատաւորի ժողովրդեան՝
նոյնպէս և սպասաւորք նորա. և
ըստ առաջնորդի քաղաքին՝ ամե-
նայն բնակիչք նորա։
3 Թագաւոր անխրատ էորուսանէ
զժողովուրդ իւր. և քաղաք շինեսա-
ցի իմաստութեամբ հզօրաց։
4 Ի ձեռին Տեառն իմաստութիւն
երկրի՝ և զպիտանին 'ի ժամանակի
յարուցանէ ի նմա։
5 Ի ձեռին Տեառն է աջողութիւն
առն, և 'ի վերայ դպրի դիցէ ըզ-
փառս նորա։
6 Ի վերայ ամենայն մեղանաց մի
պահեր ոխս մերձաւորին քոյ, և

մի ինչ գործիցես գործովք թշնամանաց։

7 Ատելի է առաջի Տեառն և մարդկան ամբարտաւանութիւն, և յերկոցունց վրիպեսցի անիրաւութիւն։

8 Թագաւորութիւն ազգէ յազգ փոխի յաղագս անիրաւութեան և թշնամանաց և ընչից։

10 Ձի՞ հպարտանայ հող և մոխիր։

11 Զի 'ի կենդանութեան ընկէց զփորոտի իւր։

12 Զցաւս երկայն կարճէ բժիշկ. և թագաւոր այսօր, և վաղիւ վախճանեսցի։

13 Զի 'ի մեռանել մարդոյ՝ ժառանգեսցէ զսողունս և զշնչիս և զորդունս։

14 Սկիզբն ամբարտաւանութեան մարդոյ՝ որ ապստամբեալ է 'ի Տեառնէ, և յարարչէն իւրմէ ստահակեսցէ զսիրտ նորա։

15 Զի սկիզբն մեղաց ամբարտաւանութիւն, և որ բուռն հարկանիցէ զնմանէ՝ բղխեսցէ զպղծութիւն։

16 Վասն այսորիկ հրաշալի արար
Տէր զհարուածս, և կործանեաց
զնա խսպառ։

17 Զաթոռս իշխանաց քակեաց
Տէր, և նստոյց փոխանակ նոցա զհեզս։

18 Զարմատս հեթանոսաց խլեաց
Տէր, և տնկեաց ընդ նոցա զխոնարհս։

19 Զդաւառս ազգաց քակեաց
Տէր, և կորոյս զնոսա մինչև 'ի հիմունս երկրի։

20 Բարձ 'ի նոցանէ և կորոյս զնոսա, և դադարեցոյց յերկրէ զյիշատակս նոցա։

22 Ոչ հաստեցաւ մարդկան ամբարտաւանութիւն, և ոչ բարկութիւն սրտմտութեան ծնողաց կանանց։

23 Զաւակ պատուական, որ է մարդոյ՝ այք երկնչին 'ի Տեառնէ. զաւակ անարգ, որ է մարդոյ՝ այք անցանեն ըստ պատուիրանն։

24 Ի մէջ եղբարց բազմաց որ երկեղն է՝ նա է պատուական, և երկիւղածք Տեառն յաչս նորա։

25 Մեծատուն և փառաւոր աղ-
քատ, պարծանք նոցա երկիւղ
Տեառն:

26 Զի իրաւացի անպատիւ առ-
նել զաղքատն և զհանճարեղ. և
չէ օրէն փառաւորել զայր մեղա-
ւոր:

27 Ճոխն և դատաւորն և հզօրն
փառաւորեսցին. և ոչ ոք 'ի նոցա-
նէ մեծ քան զայն՝ որ երկնչի 'ի
Տեառնէ:

28 Ծառայի իմաստնոյ ազատք 'ի
սպասու կայցեն. և այր հանճա-
րեղ ոչ տրանջեսցէ:

29 Մի պերճանար գործել ըզ-
գործս քո. և մի՛ շքաւր 'ի ժամա-
նակի նեղութեան քո:

30 Լաւ է որ գործիցէ յամենայն
փողոցի, քան որ սիգայցէ և հա-
ցիւ կարօտիցէ:

31 Որդեակ, հեզութեամբ գիր
շուք անձին քո, և տուր նմա պա-
տիւ ըստ արժանեաց իւրոց:

32 Զայն, որ յանձն իւր մեղան-
էէ, ո՞ արդարացուցանէ. կամ ո՞
փառաւորեսցէ զայն՝ որ անարդէ
զկեանս իւր:

33 Աղքատն մեծարի վասն հանճարոյ իւրոյ, և մեծատունն փառաւորի յաղագս մեծութեան իւրոյ։
34 Որ փառաւորեալն է 'ի մեծութեանն, յաղքատութեան քանիսն էա. և որ անմեծարն է յաղքատութեանն, 'ի մեծութեան որչափ էա։

ԳԼ. ԺԱ.

1 Իմաստութիւն խոնարհի բարձրացուցանէ զգլուխ նորա, և 'ի մէջ մեծամեծաց նստուցանէ զնա։
2 Մի գովեր զայր 'ի գեղ իւր, և մի նկուն համարիր զայր 'ի տեսիլ նորա։
3 Զի փոքր է 'ի թռչունս մեղու, և սկիզբն քաղցրութեանց պտուղ նորա։
4 Պատմուճանաւք հանդերձից մի պարծիր, և յաւուր փառաց մի հպարտանար։ Զի սքանչելի են

գործք Տէառն, և ծածկեալ են գործք նորա 'ի մարդկանէ։

5 Բազում բռնաւորք նստան 'ի գետնի, և որում ոչ կայր ակն՝ թագեցաւ։

6 Բազում հզօրք անարգեցան յոյժ, և փառաւորք մատնեցան 'ի ձեռս այլոց

7 Մինչ չև քննեալ էր, մի մեղադրես. խմանաս և ապա պատուհասես։

8 Մինչ չև լուեալ էր, մի տար պատասխանի. և ընդ մէջ բանից մի անկանիր։

9 Յաղագս երաց, որ ոչ քո էին, մի գուսպարիր. և յատենի մեղաւորաց մի նստիր ընդ նոսա։

10 Որդեակ, մի զբաղմաւ անկցին գործք քո. զի եթէ յաճախիցես, ոչ անպարտ իղիցես. և եթէ զհետ մոցես, ոչ հասանիցես. և ոչ ապրեսցիս պղծեալ։

11 Է որ ջանայ և վաստակէ և շուտ թափէ, և ևս առաւել կարօտանայ. և է որ ծոյլ է՝ և կարօտ է ընդունելութեան, և ապաժաման 'ի

ղօրութենէ, և աղքատութեամբ առաւելեալ,

13 Եւ ակն Տեառն հայեցաւ առնա 'ի բարիս. և կանգնեաց զնա 'ի խոնարհութենէ իւրմէ. և բարձրացոյց զգլուխ նորա, և հիացան 'ի վերայ բազումք:

14 Բարիք և չարիք, կեանք և մահ, աղքատութիւն, և մեծութիւն 'ի Տեառնէ են:

17 Տուրք Տեառն մնայ առ բարեպաշտս, և հաճութիւն նորա յաւիտեան:

18 Եւ որ մեծանայ 'ի պնդութենէ և 'ի ճշդութենէ իւրմէ, այս է մասն վարձու նորա. յասել նորա՝ թէ գտի հանգիստ, և այժմ կերայց 'ի բարութեանց իմոց, և ոչ գիտէ որպիսի ժամանակ հասանիցէ. և զայն այլոց թողուցու և մեռանիցի:

21 Կաց յուխտին քում. և 'ի նոյն իսօսեալիր և հնասլիր 'ի գործս քո:

22 Մի զարմանար ընդ գործս մեղաւորի, և հաւատա Տեառն՝ և յամեա 'ի վաստակս քո:

23 Զի թեթեւ է յաչս Տեառն՝ յանկարծօրէն արագ մեծացուցանել զաղքատն։

24 Օրհնութիւն Տեառն 'ի վարձս բարեպաշտաց, և 'ի վաղվաղ ժամանակի զուարճացուցանէ զօրհնութիւն իւր։

25 Մի ասեր թէ ինձ զի՞նչ պիտոյ է, և յայսմ հետէ զի՞նչ բարիք լինիցին ինձ։

26 Մի ասեր՝ թէ ինձ բաւական է, և զի՞նչ վատահացայց յայսմ հետէ։

27 Յաւուր բարեաց անյիշութիւն չարեաց, և յաւուր չարեաց ոչ յիշեսցին բարիք։

28 Զի թեթեւ է յաչս Տեառն՝ յաւուր վախճանի հատուցանել մարդոյ ըստ ճանապարհաց իւրոց։

29 Զարիք միոյ ժամու՝ մոռացու

ներ 'ի տուն քո, զի բաղում են դարանք նենգաւորին։

32 Որսորդ կաքաւի 'ի գլուխ դա-
հաւանդի. այսպէս և սիրտ ամբար-
տաւանի իբրև զդէտ մի ուշ ունի
գլխման։

33 Զի զբարին 'ի չար դարձու-
ցանէլով վարանէ, և 'ի ցանկալիսն
բիծ դիցէ։

34 Ի կայծականց հրոյ յաճախէ
կրակ, և մարդ մեղաւոր 'ի մահ վա-
րանի։

35 Զդոյշ լեր 'ի խորամանկէ, զի
չարիս նիւթէ դուցէ պարսաւանս
յաւիտենից ասցէ քեզ։

36 Բնակեցո առ քեզ զօտարո-
տին, և խոտորեսցէ զքեզ խռովու-
թեամբ և օտարացուսցէ զքեզ 'ի
քոյոց անտի։

Գլ. ԺԲ.

1 Եթէ բարի առնիցես, գիտես
ում առնիցես, և եղիցին շնորհք
բարեացն քոց։

2 Բարի արա բարեպաշտին, և գտցես փոխարէն հատուցումն. և թէ 'ի նմանէ ոչ, այլ 'ի Բարձրեալն:

3 Զեն բարիք այնմ՝ որ յաճախէ զչարիսն, և որ ողորմածութեամբ ոչ շնորհէ:

4 Տուր բարեպաշտին, և մի լինիր ձեռնկալու մեղաւորին:

6 Բարի արա խոնարհին, և մի տար ամբարշտի. խափանեա ընդհացս քո, և մի տացես նմա. զի մի նոքիմբք յաղթահարեսցեն զքեզ:

7 Զի կրկին չարիս գտցես յամենայն բարիս՝ զոր և առնիցես նմա. զի Բարձրեալն ատեայ զմեղաւորս, և հատուցանէ վրէժս ամբարշտաց. տուր բարւոյն, և մի լինիր զօրավիգն մեղաւորին:

8 Ոչ երևեսցի 'ի բարիս բարեկամ, և ոչ թաքիցէ 'ի վիշտ թշնամին:

9 Ի բարիս առն՝ թշնամիք նորա 'ի տրտմութեան, և 'ի վիշտս նորա՝ բարեկամ 'ի բաց մերժեսցի:

10 Մի հաւատար թշնամւոյ քո յաւիտեան: Զի որպէս պղինձ

Ժանգոտ է, այսպէս և չարութիւն նորա։

11 Եւ եթէ խոնարհեսցի և դը-նասցէ կորացեալ՝ կացո 'ի վերայ նորա զոգի քո, և զդուշացիր 'ի նմանէ. և եղիցես որպէս զայն՝ որ ընկիցէ զհայելին, և գիտասցես զի ոչ 'ի սպառ Ժանկոտեցոյց։

12 Մի կացուցաներ զնա հուպ 'ի քեզ, զի մի կործանեալ զքեզ՝ կաց-ցէ 'ի տեղւոջն քում։ Մի նստու-ցաներ զնա ընդ աջմէ քումմէ, զի մի երբեք խնդրեսցէ զաթոռ քո. և յետոյ ապա ծանիցես զբանս իմ, և 'ի վերայ բանից իմոց սարջասցիս։

13 Ո՞վ արգահատեսցէ Թռչէն* օձահարի և ամենեցուն որ երթան ընդդէմ գազանաց, նոյնպէս և այն՝ որ երթայ առաջի առն մե-ղաւորի և խառնակի 'ի մեղս նորա։

14 Ցամ մի զքեզ պղտատի, և եթէ զատանիցես, ոչ համբերիցէ։

15 Շրթամբք իւրովք քաղցր լինի

* Ցոր. Որ... Թռչէն. Եդաւ ըստ մեկնութեան։

թշնամին, և 'ի սրտի իւրում խորհեսցի կործանել զքեզ 'ի խորխորատ:

17 Աչքք իւրովք արտասուեսցէ թշնամին. և եթէ դադարեսցէ ժամանակ, ոչ յագեսցի յարենէ:

18 Զարիւք եթէ պատահեսցեն քեզ, դատանես զնա անդ առաջոյ քան զքեզ. և որպէս զօգնականդ այ թագղեցուսցէ զդարշապարս քո:

19 Զգլուխ իւր շարժեսցէ, և ծափս հարցէ ձեռօք. և շատ ինքն զոփասցէ, և այլայլեսցէ զերեսս իւր;

ԳԼ. ԺԳ.

Վասն մեծապանծն:

1 Որ մերձենայ 'ի ձիւթ, շաղախեսցի, և որ հաղորդ լինի ամբարտաւանի, նմանեսցի նմա:

2 Որ ինչ ծանր է քան զքեզ, մի բառնար. և որ հարստագոյն քան զքեզ իցէ և զօրագոյն, մի լինիր նոցա կցորդ:

3 Զի՞նչ հաղորդ իցէ պղտան ընդ

կաթսայի. սա ընդհարկանի, և նա փչրի։

4 Մեծատունն զրկեաց, և նոյն ցասնուցու. աղքատն զրկեցաւ, և նոյն յաղերս անկցի։

5 Եթէ պիտանի լինիցիս, վարէ զքեզ 'ի գործ. և եթէ ապաժամն, թողցէ զքեզ։

6 Եթէ ունիցիս ինչ, կենակից քո լինի. և զքեզ քամեսցէ, և նմա ոչ ցաւիցէ։

7 Պիտակք * և մոլորեցոյց զքեզ, և ժպտիցի ընդդէմ քո, և տացէ քեզ յոյս։

8 Խօսեսցի ընդ քեզ ազնիւս և ասիցէ, զինչ են պէտք քո. և յամենի առնէ զքեզ կերակրովք իւրովք։

9 Մինչև ընչաթափիցէ զքեզ երկիցս և երիցս, և ապա յետոյ ուղղեսցի ընդ քեզ. յետ այսորիկ տեսցէ զքեզ, և անփոյթ արասցէ. և զգլուխիւր շարժեսցէ 'ի վերայ քո։

10 Զգոյշ լեր՝ մի մոլորեսցիս, և

* Յօր. Պիտակք և սաղէցաս ըստ յունէն և դիաս օր։

մի չուառասցիս յուրախութեան քում։

12 Ի կոչել զքեզ հզօրին՝ խոյս տայիր, և ևս առաւել կոչէսցէ զքեզ առ ինքն։

13 Մի անկանիր 'ի մէջ, գուցէ 'ի բաց մղիցիս. և մի կար 'ի հեռուստ, զի մի մոռացեալ լինիցիս։

14 Մի յուշանար հաւատարդ նորա լինել, և մի հաւատար յաճախ բանից նորա. զի 'ի բազում խօսից փորձեսցէ զքեզ, և որպէս ժպտելով ընդդէմ քո՝ քննեսցէ զքեզ։

15 Անողորմ է՝ որ ոչ պահէ զբանս, և ոչ խնայեսցէ 'ի տանջանաց և 'ի կապանաց։

16 Ուշ կալ և զգոյշ լեր յոյժ, զի ընդ գլորման քում շրջի։

19 Ամենայն երկ զնմանին իւր սիրէ, և ամենայն մարդ զմերձաւոր իւր։

20 Ամենայն մարմին ըստ ազգի ժողովի, և այր 'ի նմանիս իւր յաբրեսցի։

21 Զինչ հաղորդ լիցէ գայլ ընդ գառին, և զինչ խաղաղութիւն մեծատան ընդ աղքատի։

23 Որս առիւծուց՝ ցիռք յանապատի, որպէս և Ճարակ մեծատանց՝ աղքատք:

25 Մեծատունն իբրև սատանեսցի, հաստատեալ լինի 'ի բարեկամս. իսկ տառապեալն յորժամ անկանի, և 'ի ծանօթից անտի 'ի բաց մղի:

26 Ի սխալել մեծատանն՝ բազում են պաշտպանք, իսկ աղքատին և ոչ մի. խօսեցաւ մեծատունն անարժանս, և եղուն նմա իրաւունք:

27 Խօսեցաւ և տառապեալն, և սատակեալ արարին զնա. բարբառեցաւ խմաստութիւն, և ոչ ընդունաւ նմա տեղի:

28 Իբրև խօսեցաւ մեծատունն՝ և ամենեքեան լռեցին, և զբան նորա վերացուցին մինչև յամպս:

29 Աղքատն խօսեցաւ, և ասացին՝ սա ո՞. և եթէ գայթեցի, առաւել ևս կործանեսցեն զնա:

30 Բարի է մեծութիւն՝ յորում ոչ կան մեղք, և չար է աղքատութիւն 'ի բերան ամպարշտի:

31 Սիրտ մարդոյ այլադունէ զե-

րեաս մարդոյ, եթէ 'ի բարիս և է-
թէ 'ի չարիս:
32 Հետք սրտի 'ի բարիս՝ դէմք
զուարթ, և գիւտք առակաց՝ խոր-
հուրդ աշխատութեամբ:

ԳԼ. ԺԴ.

1 Երանեալ է այր՝ որ ոչ գայ-
թեաց բերանով իւրով, և որ ոչ
խիթացաւ սրտմտութեամբ մեղաց:
2 Երանեալ է այր՝ զոր ոչ ըստ-
գիւտ անձն իւր, և որ ոչ անկաւ 'ի
յուսոյ իւրմէ:
3 Առն ձըղճասրտի չէ բարւոք մե-
ծութիւն, և մարդոյ չարական ընդ-
էր գոն ինչք:
4 Որ ժողովէ սրտապին, ժողովէ
այլոց. և 'ի բարիս նորա փափկաս-
ցին այլք:
5 Որ չար է իւրում անձինն, ո՞ւմ
ելցի բարի. և ոչ լինիցի ուրախ 'ի
բարիս իւր:
6 Որ զինքն չարակնէ, քան զնա
չիք ոք չարագոյն. և այս հատուց-
ցումն չարութեան նորա:

7 Թէպէտ և բարի արասցէ, 'ի մո-
ռացօնս լինի. և ապա յետոյ արաս-
ցէ զչարութիւն իւր:
8 Զար է այն, որ յաչաղէ ակամբ.
դարձուցանէ զերեսս, և անտես
առնէ զանձինս:
9 Ակն ագահի ոչ յագի մասամբ,
և անօրէնութիւն չար գօսացուցա-
նէ զանձն:
10 Ակն չար նախանձկոտ 'ի հա-
ցի*, և կարօտ է 'ի սեղան իւր:
11 Որդեակ, ըստ որում ունի-
ցիս՝ բարի արա անձին, և պատա-
րագ Տեառն արժանապէս մատո:
12 Յուշ լիցին քեզ՝ զի մահ ոչ
յամենայ, և ուխտ դժոխոց ոչ ցու-
ցաւ քեզ:
13 Մինչ չև իցէ քո վախճանեալ,
արա բարի բարեկամին. ըստ զօրու-
թեան քում կարկառեա և տուր
նմա:
14 Մի լինիս զսկեալ 'ի բարի օրէ,

* Յօր. Ակն չար նախանձկոտի
հայի. ուղղէցաւ ըստ յունին:

և մասն ցանկութեան բարւոյ մի անցանէ ըստ քեզ։

15 Ոչ ապաքէն այլուսմ թողուցուս զվաստակս քո, և զքանցանս քո 'ի բաժին վիճակաց։

16 Տուր և առ, և սիրեա զանձն քո։

17 Զի ոչ է 'ի դժոխս փափկութիւն խնդրել։

18 Ամենայն մարմին որպէս հանդերձ մաշի, զի ուխտ 'ի յաւիտենից հետէ այն է՝ թէ մահու մեռցիս։

19 Իբրև զտերև դալար յոստոխիտ ծառ, է ինչ որ թափի, և է ինչ որ բուսանի. այսպէս ազգ մարմնոյ և արեան, ոմն վախճանի, և ոմն ծնանի։

20 Ամենայն գործ որ փտանալոց է՝ պակասէ. և որ գործէն զնա՝ ընդ նմին երթայցէ։

22 Երանեալ է այր՝ որ իմաստութեամբ վախճանեսցի, և որ հանճարով իւրով խօսեսցի և 'ի գաղտնիս նորա մտախորհ լինիցի։

23 Մուտ զհետ նորա որպէս հետահան, և 'ի մուտս նորա դարանակալ լեր։

24 Որ յառուցու ընդ պատուհանս նորա, և ընդ ծխահանս նորա ուղղիդիր եղիցի,
25 Որ ելջանս առնիցէ մօտ առտուն նորա, և հարկանիցէ ցից յորմն նորա,
26 Կանգնեսցէ զխորան իւր ընդ ձեռս նորա, և դադարեսցէ 'ի դադարս բարութեանց. դիցէ զծնունդս իւր ընդ հովանեաւ նորա և ընդ ոստուք նորա:
27 Ծածկեալ լիցի 'ի նմանէ 'ի խորշակէ, և 'ի փառս նորա դադարեսցէ:

ԳԼ. ԺԵ.

1 Որ երկնչի 'ի Տեառնէ, արասցէ զայս. և որոյ կալեալ է զօրէնս, հասցէ նմա:
2 Եւ պատահեսցէ նմա իբրև ըղմայր. և որպէս զկին կուսութեան ընկալցի զնա:
3 Զամբեսցէ նմա հաց իմաստութեան, և ջուր հանձարոյ արբուսցէ նմա:

4 Յեցեալ լեցի նա, և մի անկցի. և 'ի նա ապաստան լեցի, և ոչ ամաչեսցէ. և բարձրացուսցէ զնա քան զընկերս իւր:

5 Եւ 'ի մէջ Ժողովրդեան բացցէ զբերան նորա:

6 Ուրախութիւն և պսակ ցնծութեան և անուն յաւիտենից ժառանգեսցէ:

7 Ոչ եղիցի նմա հասու իմաստք մարդկան. և արք մեղաւորք ոչ տեսցեն զնա:

8 Հեռի է 'ի հպարտութենէ, և արք սուտք ոչ յիշեսցեն զնա:

9 Ոչ է գեղեցիկ օրհնութիւն 'ի բերան մեղաւորի, զի ոչ 'ի Տեառնէ առաքեցաւ:

10 Զի իմաստութեամբ ասացեալ լեցի օրհնութիւն. և Տէր յաջողեսցէ զնա:

11 Մի ասեր՝ թէ վասն Տեառն ապստամբեցի. զի զոր ինչ ատեացն՝ մի արասցես:

12 Մի ասեր՝ թէ նա մոլորեցոյց զիս, զի չէ նմա պիտոյ այր մեղաւոր:

13 Զամենայն գարշելիս առեաց Տէր, և չէ սիրելի երկիւղածաց նորա։

14 Ինքն իսկզբանէ արար զմարդ, և եթող զնա 'ի ձեռս կամաց իւրոց։

16 Եթէ կամիս, պահեսցես զպատուիրանս և հաւատս առնել հաճութեան։

17 Եդ առաջի քո հուր և ջուր, ուր և կամիս՝ ձգես զձեռն քո։

18 Առաջի մարդոյ կեանք և մահ, և զինչ հաճոյ թուեսցի իւր՝ տացի նմա։

19 Զի բազում է իմաստութիւն Տեառն հզօր կարողութեամբ, և տեսանէ զամենայն։

20 Եւ աչք նորա յերկիւղածս իւր, և ինքն ծանիցէ զամենայն գործս մարդոյ։

21 Ոչ ումեք պատուիրեաց ամբարշտել, և ոչ ումեք համարձակ արար մեղանչել։

Գլ. ԺԶ.

1 Մի ցանկար բազմութեան ան-
պիտան որդւոց, և մի ուրախ լի-
նիր յորդիս ամբարիշտս. եթէ բազ-
մասցին, մի ուրախ լինիր 'ի նոսա:
2 Եթէ ոչ իցէ երկիւղ Տեառն
ընդ նոսա, մի վստահ լինիր 'ի
կեանս նոցա, և մի ապաստանիր 'ի
բազմութիւն նոցա:
3 Զի լաւ է մի քան զհազարս,
4 Եւ մեռանել անորդի, քան թէ
ունել որդիս ամբարիշտս:
5 Զի 'ի միոջէ իմաստնոյ շինեսցի
քաղաք, և ազգ անօրինաց վասն-
կեսցի:
6 Բազում ինչ այսպիսի տեսի ա-
չաք իմովք, և հզօրագոյնս քան
զայս լուաւ ունկն իմ:
7 Ի ժողովս մեղաւորաց վառեսցի
հուր, և յազգ անհաւան փոչորեսցի բարկութիւն:
8 Ոչ քաւեաց վասն առաջին հրս-
կայիցն, որք ապստամբեցին զօրու-
թեամբ իւրեանց:

9 Ոչ խնայեաց վասն պանդխտու-
թեան Ղովտայ, յորոց գարշեցաւ
վասն ամբարտաւանութեան նոցա։
10 Ոչ ողորմեցաւ վասն աղջին
կորստեան վերացելոց մեղօք իւ-
րեանց։
11 Եւ այսպէս վեց հարիւր հա-
զար հետևակացն, որք հպարտա-
ցեալ էին խստասրտութեամբ իւ-
րեանց. թէպէտ և մի օր իցէ խրս-
տապարանոց, զարմանք են թէ
անպարտ լինիցին։
12 Զի ողորմութիւն և բարկու-
թիւն առ նմա։
13 Հզօր է և քաւիչ, և հեղու
բարկութիւն. ըստ բազում ողոր-
մութեան նորա՝ սոյնպէս և բա-
զում է և յանդիմանութիւն նորա։
14 Զայր ըստ գործոց իւրոց դա-
տի. ոչ Ճողոպրեսցէ վասն յափշտ-
ակութեան մեղաւոր, և ոչ զբր-
կեսցէ զհամբերութիւն բարեպաշ-
տին։
15 Ամենայն ողորմածութեան ա-
բասցէ տեղի. իւրաքանչիւր ըստ
գործոց դասցէ։

16 Մի ասիցես եթէ 'ի Տեառնէ թագեայց, և 'ի բարձանց ո՞ յիշեսցէ զիս։

17 Ի բազում ժողովրդեան ոչ եղէց ծանուցեալ. զի զինչ է հոգի իմ յայնչափ արարածս։

18 Ահաւասիկ երկինք, և երկնից երկինք, անդունդք և երկիր, յայցելութիւն նորա շարժին,

19 Միանգամայն լերինք և հիմունք երկրի 'ի հայել նորա 'ի նոսա։

20 Եւ յայսոսիկ ոչ մտախորհ եղիցի սիրտ։

21 Եւ զձանապարհս նորա ո՞ ածցէ զմտաւ, և որոգայթ զոր ոչ եսեես մարդ։

22 Իսկ յոլովք 'ի գործս նորա ծածուկ են. զգործս արդարութեան ո՞ պատմեսցէ, կամ ո՞ համբերեսցէ՝ զի հեռի է ուխտն։

23 Որ պակասամիտն է, նա խորհի զայսոսիկ. և այր անզգամ և մոլորեալ՝ զմտաւ ածէ յիմարութիւնս։

24 Լուր ինձ, որդեակ, և ուսիր զհանճար. և բանից իմոց ուշ կալ սրտիւ քով։

25 Յայտնեցեալ կշռով զխրատ, և
ճշմարտութեամբ պատմեցեալ ըզ-
հանճար։

26 Իրաւամբք Տեառն գործք նո-
ցա 'ի սկզբանէ, և յարարչութենէ
նոցա զատոյց զմասունս նոցա։

27 Զարդարեաց յաւիտեան ըզ-
գործս իւր և զպետութիւնս նոցա
յազգս * նոցա։

28 Ոչ քաղցեան և ոչ աշխատե-
ցան, և ոչ նուազեցին 'ի գործոց
իւրեանց. իւրաքանչիւր ոք զմեր-
ձաւորն ոչ նեղեաց։

29 Եւ մինչև յաւիտեան ոչ ըս-
տուգանիցեն բանից նորա։

30 Յետ այսորիկ Տէր յերկիր հա-
յեցաւ, և եալեալ զսա բարութեամբ
նորա։

31 Շուռնչ ամենայն կենդանւոյ
ծածկեաց զերեսս նորա, և 'ի նոյն
դարձ դարձ նոցա։

* Յբ. յազգս նոցա. ՈՍՏՔԵՅՍ-
ԸՍՓ ՅՈՍՆԻՆ։

Գլ. ԺԷ.

1 Տէր հաստեաց 'ի հողոյ մարդ, և դարձեալ դարձոյց զնա 'ի նոյն:
2 Աւուրս թուոց ժամանակաց եւ նոցա, և եւ նոցա իշխանութիւն այնց՝ որ 'ի նմա:
3 Առանձին զգեցոյց նոցա զօրութիւն, և ըստ պատկերի իւրոյ ա-րար զնոսա:
4 Եդ զահ նորա 'ի վերայ ամենայն մարմնոյ, և տիրել գազանաց և թռչնոց:
5 Խորհուրդ և լեզու և աչս և ականջս և սիրտ եւ, իմանալ նոքաք:
6 Գիտութեամբ հանճարոյ լցոյց զնոսա, և զչար և զբարի եցոյց նոցա:
7 Եդ զակն իւր 'ի սիրտ նոցա՝ ցուցանել նոցա զմեծութիւն գործոց իւրոց, և զանուն սրբութեան օրհնեսցեն:
8 Զի և զմեծութիւն գործոց նորա պատմեսցեն:
9 Յաւել նոցա գիտութիւն, և օրէնս կենաց եւ նոցա 'ի վիճակի:

10 Ուխտ յաւիտենից հաստատեաց ընդ նոսա, և զդատաստանս իւր եցոյց նոցա։

11 Զմեծութիւն փառաց տեսին աչք նոցա, և զփառս ձայնի նոցա լուաւ ունկն նոցա. և ասաց նոցա, զդոյշ լերուք յամենայն անիրաւութենէ։

12 Եւ պատուիրեաց իւրաքանչիւրոց յայլազգս մերձաւորին։

13 Ճանապարհք նոցա առաջի նորա յամենայն ժամ՝ ոչ թաքիցեն յաչաց նորա։

14 Իւրաքանչիւր ազգի կացոյց առաջնորդ. և բաժին Տեառն Իսրայէլ է։

16 Ամենայն գործք նոցա իբրև զարեգակն առաջի նորա, և աչք նորա ցանկորդեալ՝ի ճանապարհս նոցա։

17 Ոչ ծածկեցան անիրաւութիւնք նոցա՝ի նմանէն, և ամենայն մեղք նոցա առաջի Տեառն։

18 Ողորմածութիւնք առն իբրև զկնիք ընդ նմա, և զչնորհս մարդոյ իբրև զբիբ պահեսցէ։

19 Յետ այսորիկ յարիցէ և հա-
տուցէ նոցա, և փոխարէն հա-
տուցման նոցա՝ի գլուխսնոցա հա-
տուցէ:

20 Բայց սակայն ապաշխարողաց
եւ դարձ վերստին. և մխիթարեաց
զայն, որոց նուազեալ էր համբե-
ռութիւն:

21 Դարձիր առ Տէր և՝ի բաց թող
զմեղս:

22 Աղերսեաց առաջի նորա, և
նուազեցո զյանցանս:

23 Դարձ արա առ Բարձրեալն,
դարձիր յանիրաւութենէ, և յոյժ
ատեա զգարշութիւն:

25 Բարձրեալոյն զի՞նչ գովութիւն
է՝ի դժոխս փոխանակ այնց՝ որ
կենդանի իցեն, և տացեն փոխա-
րէն գոհացողութիւնս:

26 Ի մեռելոյ, իբրև այն զի ոչ ինչ
է, կորուսեալ է խոստովանութի:

27 Կենդանին և ողջն գովեսցեն
զՏէր:

28 Իբրև զի մեծ է ողորմութիւն
Տեառն, և քաւութիւն ոյք դառ-
նան առ նա:

29 Զի ոչ կարէ ամենայն ինչ լինել 'ի մարդիկ. զի ոչ է անմահ որդի մարդոյ:

30 Զինչ լուսաւորագոյն քան զարեգակն, սակայն և նա պակասէ. և չարիս ածցէ զմտաւ մարմին և արիւն:

31 Զզօրութիւն բարձրութեան երկնից յինքն յականէ. մարդիկ ամենայն՝ հող են և մոխիր:

ԳԼ. ԺԸ.

1 Որ կենդանին է յաւիտեան՝ հաստատեաց զամենայն հասարակաց. Տէր միայն արդարասցի:

2 Ոչ ուրեք արար պատմել ըզգործս իւր:

3 Եւ ո՞ քննեսցէ զմեծամեծս նորա:

4 Զկարողութիւն մեծութեան նորա ո՞ համարեսցի, և ո՞ յաւելցէ պատմել զողորմութիւն նորա:

5 Ոչ գոյ նուազեցուցանել և ոչ յաւելուլ, և ոչ է հետազօտել զսքանչելիս Տեառն:

6 Յորժամ կատարեսցէ մարդ, յայնժամ սկսանի. և յորժամ դադարեսցէ, յայնժամ ապուշ անկցի:

7 Զի՞նչ է մարդ, և զի՞նչ է պէտք:

8 Զի՞նչ է բարի նորա, և զի՞նչ է չար նորա. թիւ տուրց մարդկան եթէ շատ, ամք հարիւր: Իբրև ըղկաթ ջրոյ 'ի ծովէ և զխիճ յաւազոյ, այսպէս ամք սակաւ յաւուրցն յաւիտենից:

9 Վասն այսորիկ երկայնամիտ եղև Տէր 'ի նոսա, և զեղոյց 'ի վերայ նոցա Տէր զողորմութիւն իւր:

10 Ետես և գիտաց զկործանումն նոցա, զի չար էր:

11 Վասն այսորիկ յաճախեաց ըղքաւութիւն իւր:

12 Ողորմութիւն մարդոյ 'ի վերայ մերձաւորի իւրոյ, իսկ ողորմութիւն Տեառն 'ի վերայ ամենայն մսեղոյ:

13 Ցանգիմանէ և խրատէ և ուսուցանէ, և դարձուցանէ իբրև հովիւ զհօտ իւր:

14 Այնց՝ որք ընդունին զխրատ՝

ողորմի, և ոչք փուԹան 'ի դատաս-
տանս նորա։

15 Որդեակ, 'ի բարիս քո արատ մի՛
մուծաներ, և մի՛ յամենայն տուրս
բան տրտմուԹեան։

16 Ոչ ապաքէն զտօՀ զովացու-
ցանէ ցօղ, սոյնպէս լաւ բան՝ քան
զտուրս։

17 Եւ երկոքին ընդ առն չնոր-
հաւորի։

18 Յիմարն անչնորհակալութ նա-
խատէ, և տուրքն չարականն հա-
լեն դաչս։

19 Մինչ չև խօսեալ ի՛ցէ՝ ուսիր,
20 Եւ յառաջ քան զդատաստան՝
քննեա զանձն քո։

21 Եւ 'ի ժամանակի սխալանաց՝
ցոյց զդարձն։

22 Մի՛ խափաներ հատուցանել
զուխտս 'ի դէպ ժամանակի. և մի՛
կալ մնալ մինչև 'ի մահ արդարա-
նալ։

23 Մինչ չև ուխտադիր լեալ ի՛ցէ՝
պատրաստեա զանձն քո. և մի՛ լի-
նիր իբրև զմարդ որ փորձիցէ զՏէր։

24 Յիշեա զցասումն յաւուրս

վախճանի, և զժամանակ վրէժ-
խնդրութեան 'ի դարձման երե-
սաց:

25 Յիշեսջիր զժամանակ սովոյ 'ի
ժամանակ լեռութեան, զաղքատու-
թիւն և զնեղութիւն՝ յաւուրսմե-
ծութեան:

26 Յառաւօտէ մինչև յերեկոյ՝
փոփոխի ժամանակ, և ամենայն
ինչ երագագոյն է առաջի Տեառն:

27 Այր իմաստուն յամենայնի
պատկառեսցէ, և յաւուրս մեղաց
զգուշասցի 'ի բազում յանցանաց:

28 Ամենայն հանճարեղ ծանեաւ
զիմաստութիւն, և այնմ որ եգիտ
զնա՝ տացէ խոստովանութիւն:

29 Հանճարեղք բանիւք և ին-
քեանք իմաստնացան, և բխեսցէն
առակս ճշմարիտս:

30 Որդեակ, զՀեշտութիւն* ցան-
կութեան մի բաշխեր յանձն քո:

31 Եւ մի ոտնհար լիցիս թշնա-
մեաց:

* Յօր. զՀրեշտակութիւն Էպո-
շով մի-ոս օր:

32 Ընդ փափկութիւն մի ուրախ
լիներ, և մի կապիր ընդ նմա։
33 Եւ հանդանակօք և փողօք մի
աղքատանար, զի և մշակ արբչու
ոչ հասցէ 'ի մեծութիւն։

ԳԼ. ԺԹ.

1 Որ անարդէ զսակաւս, առ
փոքր փոքր կործանեսցի։
2 Կանայք և գինի կործանեն զի-
մաստութիւն, և անձն յանդուգն
ստատակեսցի։
4 Որ վաղվաղկոտ է 'ի հաւատալ՝
թեթև է սրտիւ, և որ յանցանէ՝
յանձն իւր մեղանչէ։
5 Որ լիրբ է մտօք՝ ըստգիւտ լիցի
բաղմաց։
7 Ի բարեկամն և 'ի թշնամին մի
յօժարեր երկրորդել զբանն։
8 Եթէ մեղք ոչ լցեն 'ի նեղքս,
բնաւ և յայտներ մի։
9 Զի լուաւ նա, և զգուշացաւ 'ի
քէն։
10 Լուար լինչ բան, մեռցի անդ-
րէն 'ի սրտի քում. պինդ կաց՝ որ
ոչ հերձու և ելանէ արտաքս։

12 Իբրև նետ հարեալ 'ի մարմին մարդոյ, այսպէս և բան 'ի սիրտ անմտի։

13 Ցանդիման արա զբարեկամն, թերևս չիցէ իսկ զանցուցեալ։

14 Ապա եթէ իցէ մեղուցեալ՝ դարձեալ զդուշացո, զի բարեկամութիւն հաստատեսցի։

15 Բազում են բանսարկութիւնք, և դու ամենայն բանից մի հաւատար։

17 Է ոք՝ որ գթէ, և ոչ մտաք. զի ո՞վ է, որ ոչ [1] յանցեաւ մտաք կամ լեզուաւ։

18 Ամենայն իմաստութիւն երկիւղ Տեառն։

19 Զէ իմաստութիւն խրատ չարեաց, և ոչ խորհուրդ մեղաւորաց՝ իմաստութիւն։

21 Լաւ է պակասամիտն երկիւղած՝ քան որ լինի է մտաք, և յանդգնի յանցանել ըստ [2] օրէնս։

1 Յօր պակասէր որ ոչ. եդաւ ըստ յոյն բնագրին, և ըստ մեաս օր։

2 Յօր. ընդ. եդաւ ըստ մեաս օր։

22 Ի խորագիտութիւն Ճշմարիտ, և լի է ապիրատութեամբ և անիրաւութեամբ:

23 Եւ է որ կորուսանէ զշնորհս, զի յայտ արասցէ զիրաւունս. և է խորամանկ՝ որ խոնարհ շրջի 'ի ծածուկ, և փոր նորա լի է նենգութեամբ:

26 Մարդ յականէ իսկ երեւի, և 'ի պատահել երեսաց՝ Ճանաչի իմաստութիւն:

27 Հանդերձ մարդոյ և ծաղր երեսաց և քայլ ոտից՝ պատմէ զնըմանէ:

28 Ի յանդիմանութիւն՝ որ ոչ է բարի, և է լռութիւն՝ որ է իմաստութիւն:

Գլ. Ի.

1 Իբրև՞ զի կարի լաւ է յանդիմանել՝ քան ցասնուլ:

2 Եւ որ առնէ զդատ բռնութեամբ,

3 Այնպէս է՝ որպէս նեղբինի ցանկայ կուսի կուսութեան:

5 Է որ 'ի չատիսսութենէ՝ ատե-
ալ լեցի ամենեցուն, և են՝ որ ոչ գոյ
բանք 'ի բերան:
6 Են որ լուռ են՝ զի ոչ գիտեն
զԺամանակ բանից:
7 Այր խմասատուն լռեսցէ մինչև
'ի Ժամանակ խօսից. և որ անզգամ
է և ամբարիշտ՝ յառաջ վազեսցէ:
8 Որ յաշխարհէ զբան իւր, արհա-
մարհեսցի. և որ անչափ սասկա-
նայ, ատելի լեցի *:
9 Է յաջողութիւն 'ի վերայ չա-
րեաց մարդոյ, և են գիւտք 'ի
պակասութիւն:
10 Են տուրք՝ որ ոչ ինչ օգնեն,
և են տուրք՝ որ հատուցումն կըրկ-
նակի ունին:
11 Է պակասութիւն՝ որ վասն
փառաց է, և են՝ որ վասն խոնարհ-
հութեան:
12 Են՝ որ գլուխ 'ի վեր բարձին,
և են՝ որ գնեն զՊեծն փոքրու, և են՝
որ տուժին ևս եօթնապատիկ:

* Յօր. պակասէր լեցի. Եթէ ըստ
դիս օր:

13 Որ խմաստուն է բանիւք, զան-
ձն սիրելի առնէ. շնորհք մարդ-
ասց՝ ամաչեսցեն:

14 Տուրք անզգամաց՝ օգուտ ոչ
բերէ, զի աչք նոցա ընդ միոյն 'ի
բազումս նային:

15 Սակաւ ինչ տայ, և մեծամեծս
նախատէ. և իբրև 'ի քարոզ բանայ
զբերան իւր:

17 Մորոն այսպէս ասէ. չէք
իմ* բարեկամ, և շնորհք բարեաց
ոչ գոյ ինձ:

20 Լաւ է յոտից գայթագղիկ՝
քան 'ի լեզուէ. այսպէս և չարեաց
կործանումն վաղվաղակի հասցէ:

21 Առասպել տարաժամ՝ այր
անշնորհք:

22 Ի բերանոյ առն անմտի՝ ան-
արդին առակք, զի ոչ ասէ 'ի ժա-
մու:

23 Է որ 'ի մեզաց արգելեալ է
վասն տկարութեան, և 'ի հանգըս-
տեան իւրում ոչ զղջանայ:

* Յոբ. ասէ, իք չէ իմ. Էդաա ըպ
դիաս օր:

24 Է որ կորուսանէ զանձն վասն ամենոյ, և կորնչի յանկատուութեանէ իւրում։

25 Է որ զամենի յանձն առնու վասն բարեկամի, և 'ի տարապարտուց ստացաւ զնա թշնամի իւր։

26 Զար բիծ 'ի մարդ ստութիւն։

27 Այլ է գողութիւն, և այլ է ստութիւն. և երկոքին զկորուստ ժառանգեն։

28 Անարգանք անձին մարդոյ՝* բանք սրտի իւրոյ, և ամենի նորին կանխեսցի 'ի նոյն։ Որդեակ, պահեա զբանս իմ, և խնամեա լերս 'ի դմա 'ի տուէ և 'ի գիշերի. զի և որդի հարազատ և ժառանգ մեծազգի՝ որ զնախանձեացն մեծանձնութիւն ոչ նորոգէ և յառաջ բերէ՝ յամենի մեծ և 'ի նախատինս է նա հաւուց իւրոց, և անէծք նորոգ։

29 Որ խմաստուն է բանիւք, յառաջ մատուցցէ զինքն. և այր մտացի հաճոյ լինի մեծամեծաց։

* Յոր. պակասէր բանք սրտի իւրոյ. էդաս ըսպ դիաս օր։

30 Որ գործէ զերկիր՝ բարձրա-
ցուցանէ զչեղջ իւր, և որ հաճոյ
լինի մեծամեծաց՝ քաւէ զանիրա-
ւութիւն։
31 Ընծայք և կաշառք կուրացու-
ցանեն զաչս իմաստնոց, և որպէս
ցոկակապ 'ի բերան՝ խոտորեն ըզ-
յանդիմանութիւն։
32 Իմաստութի ծածկեալ՝ գանձ
անյայտ. ո՞ր օգուտ է յերկոցունց։
33 Լաւ է մարդ՝ որ թագուցանէ
զյիմարութիւն իւր, քան զմարդ՝
որ թագուցանէ զիմաստութիւն
իւր։

Գլ. ԻԱ.

1 Որդեակ, եթէ մեղաւ՝ մի՛ և-
յաւելուր. և վասն առաջնոց մե-
ղացն պաղատեաց։
2 Փախիր 'ի մեղաց իբրև յերեսաց
օձի, և թէ մօտիցես՝ մաղկատեսցէ
զքեզ։
3 Ժանիք առիւծու են ժանիք նո-
ցա, որ սպանանեն զոգիս մարդ-
կան։

4 Իբրև զսուր երկայրի ամենայն անօրէնութիւն, վերայ նորա ոչ գոյ բժշկութիւն։
5 Արհաւիրք և թշնամանք աւերեն զմեծութիւն. այսպէս տուն ամբարտաւանից եղծցի։
6 Խնդրուածք մինչև յականջս նորա, և իրաւունք նորա փութանակի եկեսցեն։
7 Որ ատէ զյանդգնմանութիւն, նա 'ի շաւիղս մեղաւորաց. և որ երկնչի 'ի Տեառնէ՝ դարձցի առ նա սրտիւ։
8 Բացէ 'ի բաց ճանապէն որ հզօր է լեզուաւ. իսկ որ մտացի է՝ գիտէ 'ի գայթել իւրում։
9 Որ չունէ զտուն իւր յայլոց ընչից՝ որպէս ժողովէ քարինս 'ի ձմերայնի։
10 Վուշ գիզեալ՝ ժողով անօրինաց, և վախճան նոցա 'ի բոց հրոյ։
11 Ճանապարհք մեղաւորաց՝ հարթեալ 'ի քարանց, և 'ի վախճանի խորխորատ դժոխոց։
12 Որ պահէ զօրէնս՝ իշխէ մտաց իւրոց,

13 Եւ վախճան երկիւղի* Տեառն՝ իմաստութիւն։

14 Ոչ խրատեսցի՝ որ ոչ է խորագէտ։

15 Է խորագիտութիւն, որ յաճախէ զդառնութիւն։

16 Գիտաստութիւն իմաստնոյ՝ իբրև զհեղեղ ստատկասցի, և խորհուրդ նորա՝ իբրև զաղբիւր ականց։

17 Փոր մարոսի իբրև զամանն ծակոտ. և զամենայն գիտութիւն ոչ կալցի։

18 Բան իմաստուն եթէ լուիցէ հանճարեալն՝ գովեսցէ զնա, և 'ի նոյն յաւելցէ։ Լուաւ որ զեղանն է՝ և չթուեցաւ նմա հաճոյ, և գարձոյց զնա զկնի թիկանց իւրոց։

19 Պատմութիւն մարոսի՝ որպէս զքեռն 'ի ճանապարհի. այլ 'ի վերոյ շրթանց իմաստնոյ՝ գտցին շնորհք։

20 Բերան իմաստնոյ խնդրեսցի

* Յօր. պակասէր Տեառն իմաստութիւն. Եդաս ըստ մեսն օր ի յոանին։

'ի Ժողովրդեանն, և զբանս նորա խորհեսցեն 'ի սրտի:

21 Իբրև զտուն եղծեալ՝ այսպէս յիմարին իմաստութիւն, և գիտութիւն անմտի՝ բանք առանց քննութեան:

22 Ոտնկապ յոտս՝ անմտաց խրատ, և իբրև զձեռնակապս աջոյ ձեռին:

23 Մորոս 'ի ծիծաղել՝ բարձրացուցանէ զբարբառ իւր, իսկ այր խորագէտ՝ հազիւ հանդարտս ժպտի:

24 Իբրև զարդ ոսկեղէն մտացոյ՝ խրատ, և որպէս զապարանջան յաջոյ բազկի:

25 Ոտն մորոսի՝ երագ 'ի տուն. իսկ այր բազմահմուտ պատկառեսցի յերեսաց:

26 Անմիտն ընդ դուրս յառեսցի * 'ի տուն, իսկ այր խրատեալ արտաքոյ կացցէ:

27 Անխրատութիւն է մարդոյ՝ ունկն դնել առ դուրս. իսկ իմաստուն ստաղտկասցի յանարգանաց:

* Յոր. յայտնեսցի. «ՈՂՂԵՑԱ» ԸՍՊ յունին:

28 Շրթունք օտարոտեաց՝ յայ-
նոսիկ պատմեսցեն, իսկ բանք ի-
մաստնոյ կացցեն 'ի կշիռ։
29 Ի բերան յիմարաց՝ սիրտ նո-
ցա. իսկ 'ի սիրտ իմաստնոյ՝ բերան
նոցա։
30 Յանիծանել ամբարշտին զա-
տանայ՝ իւրովի զիւր անձն անի-
ծանէ։
31 Պղծէ զանձն իւր փասքուսն,
և ուր և բնակեսցէ մօտ՝ ատելի
լիցի։

Գլ. ԻԲ.

1 Քարի շաղախելոյ հաւասար
է վատն*, և ամենայն ոք շէսցէ 'ի
վերայ անարգանաց նորա։
2 Աղբոյ և կուոյ հաւասար է
վատն, և ամենայն որ վերացուսցէ
զնա՝ թօթափեսցէ զձեռն իւր։
3 Ամօթ հօր 'ի ծնանել անխրա-
տի. իսկ դուստր վատն նուազուլ
թեան լինի։

* Յօր. պայնասէր վատն. Եթէ ըստ
մեր օր ի յոանին։

4 Դուստր խմաստուն ժառան-
գեսցէ զայր իւր, իսկ որ յամօթն
առնիցէ՝ 'ի տրտմութիւն է ծնե-
լեացն։

5 Զհայր և զմայր յամօթ առնէ
յայրատն, յերկոցունց անարգես-
ցի։

6 Երաժիշտք և սուգք՝ տարա-
պարտ պատմութիւն. իսկ գանք
և խրատք յամենայն ժամ իմաս-
տութիւն։

7 Զխեցի կարկատէ՝ որ ուսու-
ցանէ զյիմարն,

8 Եւ զարթուցանէ զննջեցեալն
'ի խոր քնոյ։

9 Պատմէ նիրհեցելոյն՝ որ պատմէ
յիմարին, և 'ի վախճանին ասիցէ՝
զինչ է։

10 Լաց 'ի վերայ մեռելոյ, զի պա-
կասեաց լոյս. և 'ի վերայ մորոսին
լաց, զի պակասեաց իմաստու-
թիւն։

11 Մատդիւր լաց 'ի վերայ մե-
ռելոյն, զի հանգեաւ։

12 Իսկ յիմարին քան զմահ կեանն
չարչ է։

13 Սուգ մեռելոյ՝ աւուրք եօթն. իսկ անմտին և ամպարշտին՝ ամենայն աւուրք կենաց իւրոց։

14 Ընդ անզգամին մի յաճախեր բանիւ, և առ անմիտն մի երթար։

15 Զգոյշ լեր 'ի նմանէ՝ զի մի աշխատութիւն կրեսցես, մի շաղախեցես 'ի թօթափման նորա։

16 Այլ խոտորեաց 'ի նմանէ, և գտցես հանգիստ, և ոչ ճանձրասցիս պանդորրութեամբ նորա։

17 Քան զկապար զի՞նչ ծանր լինիցի, և զի՞նչ անուն նորա՝ թէ ոչ յիմար։

18 Զաւազ և զաղ և զշանթս երկաթոյ դիւրին է կրել՝ քան զմարդ անմիտ։

19 Պահանգակապ փայտեղէն կապեալ 'ի շինածի՝ և 'ի շարժման ոչ խախտեսցի, որպէս և սիրտ հաստատեալ յիմացութիւն խորհրդոյ։

20 Ի ժամանակի ոչ վհատեսցի սիրտ հաստատեալ 'ի խորհրդեան իմաստութեան։

21 Իբրև զյարդ, աւազեղէն քա-
բակուռ որմոյ խճաքարք՝ որ 'ի
բարձրաւանդի կացցեն, առաջի
հողմոց ոչ մնայցեն:
22 Այսպէս սիրտ վատթարի 'ի
խորհրդեան մարդոյ, առաջի ամե-
նայն երկիւղի ոչ համբերեսցէ:
24 Որ խոցէ զակն՝ ի՞նչ ասցէ ար-
տասուս, և որ խոցէ զսիրտ՝ յայտ-
նեսցէ զդայութիւն*:
25 Որ ձգէ քարինս թռչնոց, խրբ-
տուցանէ զնոսա. և որ նախատէ
զբարեկամ, լուծցէ զբարեկամու-
թիւն:
26 Ի վերայ բարեկամի թէ և սուր
հանիցես՝ մի անյոյս լինիցիս, զի գոյ
դարձ:
27 Ի վերայ բարեկամի թէ և բա-
նայցես զբերան՝ մի երկնչիր, զի է
հաշտութիւն. բաց 'ի նախատա-
նաց և յամբարտաւանութենէ և
'ի յայտնելոյ խորհրդոյ և 'ի նեն-
գութենէ վիրաց:

* Յօր. զդայթութիւն. «ՈՂՔԵՅՈՒ-
ԸՍՊ ՅՈՒՆԻՆ»:

28 Յայսցանէ փախիցէ ամենայն
բարեկամ. հաւատարմութիւն ըս-
տացիր յաղքատութեան ընդ մեր-
ձաւորին, զի 'ի բարիս նորա ուրախ
լիցիս։
29 Ի ժամանակի նեղութեան
մնա կաց առ նմա, զի 'ի ժառան-
գութեան նորա և դու ժառան-
գեսցես։
30 Յառաջ քան զհուր՝ գոլորշիք
հնոցի և ծուխ, այսպէս և յա-
ռաջ քան զարիւնս՝ բամբասանք։
31 Զբարեկամ ընդ ինեւ ոչնեղ՝
ոչ ամաչեցիս. և յերեսաց նորա ոչ
թագեալց, թէ և չարիք պատա-
հեսցեն ինձ վասն նորա։
32 Ամենայն որ լսիցէ, խորշեսցի
'ի նմանէ։
33 Ո՞ տայր ինձ 'ի վերայ բերա-
նոյ իմոյ պահպանութիւն, և 'ի
վերայ շրթանց իմոց կնիք խորա-
գիտութեան. զի մի անկայց 'ի
նմանէ և լեզու իմ կորուսցէ զիս։

ԳԼ. ԻԴ.

1 Տէր, հայր և իշխան կենաց իմոց՝ մի թողուր զիս 'ի խորհուրդս նոցա:

2 Ո՞կացուցանէր 'ի վերայ մտաց իմոց լըլկանս, և 'ի վերայ սրտի իմոյ խրատ իմաստութեան:

3 Զի 'ի վերայ տգիտութեանց իմոց մի արասցեն լենայ, և ոչ թոյլ տուեալ լինիցին մեղք նոցա. որպէս զի մի յաճախեսցեն տգիտութիւնք իմ և մեղք իմ բազմասցին, և անկանիցիմ առաջի հակառակորդացն, և ոտնհար լինիցի ինձ թշնամին իմ:

4 Տէր հայր և Աստուած կենաց իմոց,

5 Զբօսանս աչաց մի տար ինձ, և զցանկութիւն սրտի դարձո յինէն:

6 Ցանկութիւն որովայնի և գիջութիւն մի հասցեն ինձ, և անձին լրբենոյ մի մատներ զիս:

Խրատ բերանոյ։

7 Զխրատս բերանոյ լուարուք, որ դեակք, և որ պահիցէն՝ ոչ ըմբռնեսցի։

8 Շրթամբք իւրովք կալեալ լիցի մեղաւորն, և հայհոյիչն և ամբարտաւանն գայթագղեսցի նոքիմբք։

9 Մի ընդելացուցաներ[1] զբերան քո ընդ երդումն։

10 Եւ անուանակոչութեան Սրբոյն մի սովորիր[2]։

11 Որպէս ծառայ՝ որ ստէպ 'ի հարց և 'ի փորձ մտանիցէ՝ 'ի վերայ ոչ լինիցի կարօտ, նոյն[3] որ երդնուցուն և անուանիցէ հանապազ՝ 'ի մեղայ ոչ սրբեսցի։

1 Յօր. ընդացցնել. ուղղեցաւ ըստ միւս օր և յոանին։

2 Յօր. մի Ճարտարեր. ուղղեցաւ ըստ յոանին և միւս օր։

3 Յօր. որպէս որ. ուղղեցաւ ըստ յոանին։

12 Այլ շատերդուն լըցլի անօրէնութեամբ, և ոչ 'ի բացեայ լեցին 'ի տանէ նորա հարուածք:

13 Եթէ յանցանիցէ, մեղք նորա 'ի վերայ նորա. և եթէ չիոթ առնիցէ մեղաւ կրկին:

14 Եւ եթէ վայրապար ինչ երդուաւ, ոչ արդարասցի. զի լըցլի տանջանօք տուն նորա:

15 Ի բան հաւատար մահու:

16 Մի գոցի այն 'ի ժառանգութիւն Յակոբայ. և 'ի բարեպաշտասց այս ամենայն հեռի եղիցի, և 'ի մեղս ոչ թաւալեսցին:

17 Ընդ անիրաւութիւն մի ընդելացուցաներ զբերան քո, զի գոյ 'ի նմա բան մեղաց:

18 Ցիշեա զհայր և զմայր քո, զի 'ի մէջ մեծամեծաց նստիցիս դու:

19 Գուցէ մոռանայցես առաջի նոցա, և սովորութեամբ քով անմոռասցիս. և կամիցիս թէ չէիր ծընեալ, և զօր ծննդեան քո անիծանեսցես:

20 Այլ որ սովորի ընդ բանս նախատանայ՝ յամենայն աւուրս իւր նա ոչ խրատեսցի:

21 Երկու ինչ են, որ բաղումառնեն զմեղս. երրորդն ածէ 'ի վերայ զբարկութիւն:

22 Անձն ցասկոտ եբրև զհուր բորբոքեալ, և ոչ չիջանի մինչև ընկըլցի:

23 Այր բոզանոց՝ մարմնով անդամոց իւրոց ոչ դադարեսցէ՝ մինչև վառեսցէ զհուր:

24 Մարդոյ պոռնկի ամենայն հաց քաղցր է. ոչ դադարեսցէ՝ մինչև վախճանեսցի:

25 Այր որ յանցանիցէ ըստ մահնձն իւր, ասիցէ 'ի սրտի իւրում թէ ո՞ տեսանիցէ զիս:

26 Խաւար շուրջ զինև, որմք ծածկեն զիս, և ոչ ոք տեսանէ զիս. զի՞ կասկածեմ, զի զմեղս իմ ոչ տեսանէ Բարձրեալն:

27 Եւ աչք մարդկան է երկիւղ նորա:

28 Եւ ոչ գիտայ թէ աչք Տեառն՝ բիւրապատիկ քան զարեգակն լուսաւորագոյն է, որ հային յամենայն ճանապարհս մարդկան, և նըկատէ զտեղիս դաղտնի:

29 Մինչ չև լեալ էին՝ ամենայն
ծանօթ էին նմա. սասկս և յետ
վախճանելոյ:
30 Այնպիսին 'ի հրապարակս
քաղաքի տայէ վրէժս, և ուր ոչ
կարծիցէ՝ ըմբռնեսցի:
32 Նոյնպէս և կին՝ որ թողեալ է
զայր իւր, և յանդիման կացուսցէ
ժառանգ յօտարէ:
33 Նախ իակ ահա օրինաց Բարձ-
րելոյն ստուգկանեաց, երկրորդ
անգամ՝ յայր իւր յանցեաւ, և եր-
րորդ՝ պոռնկութեամբ շնացաւ, և
յօտար յառնէ որդիս առաջի կա-
ցոյց:
34 Սա 'ի ժողովրդենէ ելեալ ել-
ցի, և 'ի վերայ որդւոց նորա այցե-
լութիւն ոչ եղիցի:
35 Ոչ արձակեսցեն որդիք նո-
րա արմատս, և ոսոք նորա մի ա-
րասցեն պտուղ:
36 Թողցէ յանէծս դպիչատակ
իւր, և նախատինք նորա մի ջն-
ջեսցին:
37 Զի ոչ ինչ է լաւ քան զերբ-
կիւղ Տեառն, և ոչ ինչ քաղցրա-

գոյն քան զդնել միտ պատուիրա-
նաց Տեառն։

ԳԼ. ԻԴ.

Գովեստիւն Իմաստութեան։

1 Իմաստութիւն գովեսցէ զան-
ձն, և 'ի մէջ Ժողովրդեան իւրոյ
պարծեսցի։
2 Յեկեղեցւոջ Բարձրելոյն զբե-
ան իւր բացցէ, և առաջի զօրու-
թեան նորա պարծեսցի։
3 Եւ 'ի բերանոյ Բարձրելոյն ելն,
և իբրև զմէգ ծածկեցի զերկիր։
7 Եւ 'ի բարձունս բնակեցայ, և
աթոռ իմ 'ի սիւն ամպոյ։
8 Ընդ ծիր երկնից շրջեցայ միայն,
և 'ի խորս անդընդոց գնացի,
9 Յալիս ծովու, և յամենայն երկիր։
10 Եւ յամենայն Ժողովրդեան և
յազգիս ստացայ։
11 Ընդ սոսա ամենեսեան հան-
գիստ խնդրեցի, և 'ի Ժառանգու-
թեան՝ ուր դադարեցիցէ։

12 Յայնժամ պատուիրեաց ինձ արարիչն ամենեցուն, և որ հաստատեացն զիս՝ արար դադար խորանի իմոյ։

13 Եւ ասաց. 'ի մէջ Յակոբայ բնակեաց դու, և յԻսրայելի ժառանգութիւն կալջիր։

14 Յառաջ քան զյաւիտեանս՝ իսկզբանէ հաստատեաց զիս, և մինչև յաւիտեան ոչ պակասեցայ։

15 Ի սուրբ խորանի առաջի նորա պաշտեցի, և ապա 'ի Սիոն հաստատեցայ*. 'ի սուրբ քաղաքի նմա նապէս հանգոյց զիս, և յԵրուսաղէմ իշխանութիւն իմ։

16 Եւ արմատացայ 'ի փառաւոր ժողովրդեան. 'ի բաժին Տեառն ժառանգութիւն նորա։

17 Իբրև զնոճ բարձրացայ 'ի Լիբանանու, և իբրև զսարդն 'ի Լերինս Ահերմոնի։

18 Եւ իբրև զարմաւենի բարձրացայ յԵնդադս, և իբրև զտունկ վարդենոյ յԵրիքով։

* Յոր. հաստատեցայց. ուղղեցաւ ըստ յունին և մեր օր։

19 Իբրև զՔրիստոսի վայելուչ 'ի դաշտի, և բարձրացայ իբրև զսօս։
20 Եւ իբրև զկինամոն, և որպէս զՀանքակ խնկոց՝ եռուս հոտ։
21 Իբրև զմուռս ընտիր բուրեցի անուշահոտութիւն, որպէս զքաղբան և զեղունկն և զտաշխն և ըզհոտ կնդրկի 'ի վրանի։
22 Ես իբրև զբևեկնի արձակեցի զոստս իմ. և ոստք իմ, ոստք փառաց և շնորհաց։
23 Ես որպէս այդի բղխեցի զբնորհս, և ծաղիկք իմ պտուղ փառաց և մեծութեան։
26 Մատերուք ամենեքեան՝ ոչք ցանկացեալ էք ինձ, և յարմտեաց իմոց յագեցարուք։
27 Զի յիշատակ իմ քան զմեղր քաղցր է, քանզի և ժառանգութիւն իմ քան զխորիսխ մեղու։
29 Ոչք ուտեն զիս՝ տակաւին քաղցիցեն. և ոչք ըմպեն զիս՝ տակաւին ծարաւեսցին։
30 Որ լուիցէ ինձ՝ ոչ ամաչեսցէ, և ոչք գործիցեն ինձ՝ ոչ մեղիցեն։
32 Այս ամենայն գիրք ուխտի Աստուծոյ Բարձրելոյն։

33 Օրէնք, զոր պատուիրեաց մեզ Մովսէս,

34 Ժառանգութիւն Ժողովրդոց Յակոբայ։

35 Որ զեղու իբրև զԻսահակն զնմանութիւն, և որպէս զՏիգրիս յաւուրս կանխոց։

36 Որ լցուցանէ իբրև զԵփրատ՝ զհանճար, և իբրև զՅորդանան[1] յաւուրս հնձոց։

37 Որ երևեցուցանէ իբրև զլոյս զնրատ[2] և իբրև զԴեհոն յաւուրս կիթոց։

38 Ոչ վախճանեաց առաջինն ճանաչել զնա, և ոչ վերջինն զննեաց զնա։

39 Զի 'ի ծովէ բազմացաւ մտախոհութիւն նորա, և խորհուրդ նորա՝ յանդնդոց մեծաց։

41 Եւ իբրև զջրմուղ էլն 'ի դեռոյ, և որպէս վտակ էլն 'ի դրախտէ։

1 Յօր. և իբրև զյարդն. ուղղեցաւ ըստ յունին և մեռաւ օր։

2 Յօր. իբրև զլոյս զդաշտ. ուղղեցաւ ըստ յունին։

42 Ասացի՝ արբուցիչ զպարտէզն. և արբուցիչ զածուն։
43 Եւ ահա եղև ինձ ջրմուղ 'ի գետ, և գետն եղև ինձ 'ի ծով։
44 Տակաւին զխրատ իբրև զառաւօտ լուսաւորեցից, և երևեցուցից զնա մինչև 'ի հեռաւորակ։
46 Տակաւին վարդապետութիւն և որպէս զմարգարէութիւն սփռեցից, և թողից զնա յաղագս յաւիտենից։
47 Տեսէք զի ոչ ինձ միայնոյ վաստակեցի, այլ ամենեցուն՝ որ խնդրեն զնա։

Գլ. Իե.

1 Երիւք գեղեցկացայ, և յաբեայ վայելուչ առաջի Տեառն և մարդկան։
2 Միաբանութիւն եղբարց, և սէր մերձաւորաց, և կին և այր՝ որ զմիմեամբք գայցեն։
3 Երիս ինչ ատեայ անձն իմ, և յոյժ ծանրացայ կենաց նոցա։
4 Զաղքատն հպարտ, և զմեծա-

տունն սուտ, զծերը գագաչոտ և պակասեալ 'ի մտաց։

5 Ի մանկութեան ոչ հաւաքեցեր, և զիարդ գտանիցես 'ի ծերութեան քում։

6 Իբրև զի գեղեցիկ է ալեաց առնել դատ՝ և ծերոց ճանաչել զխորհուրդ։

7 Իբրև զի գեղեցիկ է ծերոց իմաստութիւն, և փառաւորելոց իմացութիւն և խորհուրդ։

8 Պատակ ծերոց շատահմտութիւն, և պարծանք նոցա երկիւղ Տեառն։

9 Ինն կարծեաց երանի եռու 'ի սրտի, և զոտանեորդն ասացի էզուաւ։

10 Մարդ ուրախ լեալ յորդիս, կենդանի՝ և տեսանիցէ զկործանումն թշնամեաց։

11 Երանի՝ որ բնակիցէ ընդ կնոջ իմաստնոյ, և որ լեզուաւ իւրով ոչ դայթեաց, և որ ոչ ծառայեաց անարժանի իւրում[2]։

1 Յօր. ատելեաց. ասղէրաա ըսպ յոանին։

2 Յօր. ուրում. ասղէրաա ըսպ յոանին։

12 Եւ է բանի՛ որ էգիտ հանճար, և որ պատմիցէ յականջս լսողաց։
13 Իբրև զի մեծ է՝ որ էգիտ զիմաստութիւն. այլ ոչ է առաւել քան զերկիւղածն 'ի Տեառնէ։
14 Երկիւղ Տեառն քան զամենայն յոլովեաց։
16 Եւ որ ունիցի զնա՝ ոՀմնանիցէ։
18 Զամենայն վէր, և մի զվէր սրտի։
19 Զամենայն չարութիւն, և մի զչարութիւն կնոջ։
20 Զամենայն հարուածս, և մի զհարուածս ատելեաց։
21 Զամենայն զվրէժս, և մի ըզվրէժս թշնամեաց։
22 Ոչ է գլուխ չար քան զգլուխ օձի, և ոչ ցասումն՝ քան զցասումն թշնամւոյն։

Վասն լար ինջ։

23 Բնակիլ ընդ առիւծ և ընդ վիշապի հաճեցայ՝ քան բնակիլ ընդ կնոջ չարի։

24 Չարութիւն կնոջ այլագունէ զտեսիլ նորա, և մթացուցանէ * զերեսս նորա իբրև զխորդ։

25 Ի մէջ ընկերաց իւրոց բազմեսցի այր նորա, և լուեալ՝ յոգւոց հանէ։

26 Փոքր է ամենայն չարութիւն առ չարութեամբ կնոջ. վիճակ մեղաւորի ելցէ նմա։

27 Զառիվերս աւազուտ առ ոտիւք ծերոյ, այսպէս կին լեզուանի առն հեզոյ։

28 Մի հայիր 'ի դեղ կնոջ, և մի փափաքեր։

29 Բարկութիւն և լրբութիւն և ամօթ մեծ՝

* Ցօր. միացուցանէ ոսպղէոյս ըստ յոտնին։

30 Կին եթէ հրամանատար լիցի առն իւրում:

31 Սիրտ չուառացեալ, և դէմք խոժոռ, և վէր սրտի՝ կին չար:

32 Ձեռք լքեալք և ծունկք լուծեալք՝ որ ոչ երանի տացէ առն իւրում:

33 Ի կնոջէ սկիզբն մեղաց, և վասն նորա մեռանիմք ամենեքեան:

34 Մի տար ելս ջրոյ, և մի կնոջ չարի համարձակութիւն. եթէ ոչ գնասցէ ըստ ձեռին քում, ի մարմնոյ քոյ 'ի բաց հատ զնա:

Գլ. ԻԶ.

1 Կնոջ բարեբարոյի՝ երանելի է այր նորա, և թիւ ամաց նորա կրկնակի:

2 Կին ժրաջլուխ ուրախ առնէ զայր իւր, և զամս նորա լի արասցէ խաղաղութեամբ:

3 Կին բարեբարոյ մասն բարի, 'ի բաժին երկիւղածաց Տեառն տացի. իսկ մեծատուն և աղքատ 'ի սիրտ բարեբար:

4 Յամենայն ժամանակի դէմք զուարթք։
5 Յերից կասկածեաց սիրտ իմ, և վասն չորրորդ երեսացն յաղօթս կացի։
6 Բանսարկութիւն քաղաքի, և եկեղեցի ամբոխի,
7 Եւ սուտ չարախօսութիւն՝ քան զմահ ամենայն դժպատեհ։
8 Յաւ սրտի և սուգ՝ կին նախանձ ընդդէմ առ միւս կին.
9 Եւ գազան լեզուանի, որ ամենեցուն հաղորդի։
10 Եղնալուծ յերերի՝ կին չար. որ ուներցի զնմանէ, որպէս որ բրուներցէ զիժ։
11 Բանսարկութիւն մեծ՝ կին արբշիռ, և զհայտառականս իւր ոչ ծածկեսցէ։
12 Պոռնկութիւն կնոջ 'ի զքօսանս իւր ծանիցի, 'ի զքօսանս աչաց և յարտեւանունս * իւր։
13 Ի վերայ անամօթ դատեր՝ հաս-

* Յօր. յօրէնս իւր. Եդեսս. ըստ յոյն բնագրին. Դեռ օր. յօնս։

տատեա զդուշութիւն, զի մի զբ-
տեալ համարձակութիւն՝ անձամբ
վարիցի։

14 Զկնի լրբեանի աչաց՝ զդուշու-
թիւն արա, և մի զարմանար՝ եթէ
և 'ի քեզ յանցանիցէ։

15 Իբրև զծարաւի ճանապար-
հորդ * զբերան բացցէ, և յամե-
նայր մատաւոր ջրոց արբցէ։ Յան-
դիման ամենայն ցցոյ նստցի, և ընդ-
դէմ նեսի բացցէ զկապարձն։

15 Շնորհք կնոջ զուարճացուցա-
նեն զայր նորա, և զոսկերս նորա
պարարէ հանճար նորա։

17 Տուրք Տեառն կին ցածուն։

18 Եւ ոչ գոյ փոխանակ խրատե-
լոյ անձին։

19 Շնորհք 'ի վերայ շնորհաց կին
ամօթոտած,

20 Եւ ոչ է կշիռ ամենայն ար-
ժանի ժուժկալ ** անձին նորա։

* Յօր. Իբրև զծարաւ 'ի ճանա-
պարհդ. Եթէ ըստ յոյն բնագրին։
** Յօր. ամենաժուժկալ. ողջե-
դոյս ըստ յոնին։

21 Արեգակն ծագեալ՝ի բարձունս
Տեառն, և գեղեցկութիւն կնոջ
բարեբարոյի՝ի զարդու տան նո-
ցա։
22 Ճրագ լուսատու՝ի վերայ սուրբ
աշտանակի, և գեղ երեսաց՝ի վե-
րայ հանդարտ հաստակի։
23 Սիւնք ոսկեղէնք՝ի վերայ արծ-
աթեղէն խարսխաց. և ոտք գե-
ղեցիկ՝ի վերայ հեզացեալ կրծից։
24 Վասն երկուց տրտմեալ է սիրտ
իմ, և վասն երրորդին եկն յիս ցա-
սումն։
26 Այր պատերազմող կարօտեալ
առ աղքատութեան. և արք իմաս-
տունք՝ եթէ խոտան լինիցին։
27 Եւ որ անդրէն դարձաւ յար-
դարութենէ՝ի մեղս, Տեր պատ-
րաստեաց զնա՝ի սուր.
28 Հաղիւ եթէ ապրիցի վաճա-
ռական՝ի յանցանաց, և ոչ արդա-
րասցի թանդար՝ի մեղաց։

ԳԼ. ԻԷ.

1 Յաղագս կարասւոյ բաղումք մեղան, և որ ինդրէ յամախեցուցանել՝ դարձուսցէ զանն։
2 Ընդ մէջ կցուածի քարանց՝ վարեսցի ցից, և 'ի մէջ վաճառելոյ և գնելոյ խզեսցին մեղք։
4 Եթէ ոչ զերկիւղէ Տեառն պինդ ունկցին փուրթանակի, երագ երագ կործանեսցի տուն նորա։
5 Ի մաղին խախալելոյ՝ մնա աղբ, որպէս կղկղանք մարդոյ՝ ի խորհուրդս իւր։
6 Զանօթս բրտի փորձէն բովք, և փորձ մարդոյ 'ի խորհուրդս իւր։
7 Զմշակութիւն ծառոց ցուցանէ պտուղ նորա, որպէս և բան՝ խորհրդոց սրտի մարդոյ։
8 Յառաջ քան զխորհուրդ, մի գովէր զմարդ. այս է փորձ մարդկան։
9 Եթէ զհետ երթիցես արդարութեան, հասցես. և զգեցցիս զնա իբրև զպճղնաւոր փառաց։

10 Թուչունք առ իւրեանց նմա-
նիսն դադարեն, և Ճշմարտութիւն
առ գործելիսն նորա դարձցի։
11 Անիւծ որսոց լինի դարանակալ,
որպէս մեղք գործելեացն անիրա-
ւութեան։
12 Պատմութիւն բարեպաշտաց՝
հանապազ իմաստութիւն. իսկ ա-
նրզգաստն ելբև զլուսին այլափո-
խի։
13 Ի մէջ անմտաց պահեա զժա-
մանակ, իսկ 'ի մէջ խորհրդակա-
նաց ցանկորդեսջիր։
14 Պատմութիւնք յիմարաց՝ ձանձ-
րութիւնք, և ծաղր նոցա՝ զբաղ-
մամբ մեղաց։
15 Խօսք շատերգման՝ ծառ կա-
ցուցանեն զհերս, և կապն նոցա
զականջս տան ունել։
16 Հեղու

19 Ապա թէ յայտնիցես զխորհուրդս նորա, ոչ երթիցես զհետ նորա։
20 Զի որպէս կորոյս մարդ զթշնամին իւր, սապէս կորուսեր զսէր մերձաւորին։
21 Եւ եթրև զթռչունս 'ի ձեռանէ քումմէ արձակեցեր, նոյնպէս թողեր զմերձաւորն, և ոչ որսացես զնա։
22 Մի երթար զհետ նորա, զի հեռացաւ, և ապրեաց իբրև զայծեամն 'ի հաղբիւց։
23 Զի զվէր մարթի պատել, և հայհոյութեան՝ դոյ հաշտութիւն։
24 Իսկ որ յայտնէ զխորհուրդս, յուսահատ եղև։
25 Որ ակնարկէ ակամբ, նիւթէ զչարիս. և որ դիտէ զնա, 'ի բաց կացցէ 'ի նմանէ։
26 Առաջի աչաց քոց քաղցրացուցանէ զբերան իւր, և ընդ բանս քո զարմանայ. իսկ յետոյ ծռեսցէ զբերան իւր, և 'ի բանս քո դիցէ դայթագղութիւն։

27 Բազումքինչ ատեցի, և ոչ այն-
պէս որպէս զնա. և Տէր ատեսցէ
զնա։

28 Որ ձգէ քար երկնապող, 'ի գլ-
լուխս իւր ընկենու. և հարուածք
նենգաւորի խարխարէ զվէրս.

29 Որ փորէ խորխորատ, 'ի նոյն
անկցի. և որ դնէ որոգայթ, 'ի
նոյն ըմբռնեսցի։

30 Որ առնէ զչարիս, 'ի նոսին
թաւալեսցի, և ոչ գիտասցէ՝ ուստի
հասին նմա։

31 Կատականք և նախատինք՝ ամ-
բարտաւանից. և վրէժինդրու-
թիւն իբրև առիւծ վարանեսցէ
զնա։

32 Որոգայթիւ ըմբռնեսցին ոյք
ուրախ լինին ընդ անկանել բարե-
պաշտից, և հեծութիւն ծախես-
ցէ զնոսա յառաջ քան զմահ իւ-
րեանց։

33 Ինքք և բարկութիւն, և նոքին
են գարշելիք. և այր մեղաւոր պինդ
կալցի զնոսա։

ԳԼ. ԻԸ.

Վասն ոխակալաց։

1 Որ առնու վրէժ, 'ի Տեառնէ գտցէ վրէժխնդրութիւն, և զմեղս իւր հաստատելով հաստատեսցէ։
2 Թող զանիրաւութիւն եղբօր քում. և յայնժամ յաղաչէլ քո՝ մեղք քո լուծցին։
3 Մարդ մարդոյ պահէ զբարկութիւն, և 'ի Տեառնէ խնդրէ զբժշկութիւն։
4 Ի վերայ մարդոյ նմանոյ իւրոյ չունի ողորմութիւն, և վասն մեղաց իւրոց աղերսէ։
5 Ինքն մսեղն է՝ և պահէ ոխս, ո՞ քաւեսցէ զմեղս նորա։
6 Յիշեա զառյաւպայն, և դադարեա 'ի թշնամութենէ.
7 Զապականութիւն և զմահ, և կաց 'ի պատուիրանս։
8 Յիշեա զպատուիրանս, և մի պահեր ոխս մերձաւորին.

9 Եւ զուխտ Բարձրելոյն, և ան-
տես արա զանգիտութիւն:
10 Ի բաց լեր 'ի կագոյ, և նուա-
զեցուսցես զմեղս. զի մարդ ցա-
սուցեալ բորբոքեսցէ զկռիւ, և
այր մեղաւոր խառնեսցէ զբարե-
կամն իւր:
11 Եւ 'ի մէջ այնց, որ խաղաղու-
թեամբ լցեն, արկանէ բանսար-
կութիւն.
12 Ըստ նիւթոյ հրոյն՝ այնպէս
վառեսցի, և ըստ սաստկութեան
կռուոյն՝ այնպէս բորբոքեսցի. ըստ
զօրութեան մարդոյն սրամտու-
թիւն նորա լիցի, և ըստ մեծու-
թեանն բարձրացուսցէ զբարկու-
թիւն իւր:
13 Հակառակութիւն փութա-
ցեալ բորբոքէ հուր. և կռիւ փու-
թացեալ հեղու արիւն:
14 Եթէ փչեսցի կայծ, բորբո-
քեսցի. և եթէ թքեսցի 'ի նա,
շնչցի. երկոքին 'ի բերանոյ քոյ ե-
լանեն:
15 Զքսուն և զերկխօսն առ հա-
սարակ անիծանիցիք, զի բազում
խաղաղակեացս կորոյս:

16 Լեզու երեքկին զբաղումն սա-
սանեաց, և փոփոխեաց զնոսա
յաղէ յաղէ,
17 Եւ զբաղաքս ամուրս կործա-
նեաց,
18 Եւ զտունս մեծամեծս աւե-
րեաց։
19 Լեզու երեքկին զկանայս ժրա-
գլուխս եհան, և զրկեաց զնոսա
'ի վաստակոց իւրեանց։
20 Որ միտ դիցէ նմա, մի գոցէ
հանգիստ, և մի բնակեսցէ վստա-
հութեամբ։
21 Հարուածք մտրակի առնէ ե-
րաշխեպ, իսկ հարուածք լեզուի
փշրեսցէ զոսկերս։
22 Բազումք անկան 'ի սայր սու-
սերի, և ոչ որպէս որք անկան
վասն լեզուի։
23 Երանեալ է՝ որ ծածկեցաւ 'ի
նմանէ, և որ ոչ անց ընդ ցասումն
նորա, և որ ոչ ձգեաց զլուծ նորա,
և որ ոչ կապեցաւ սամեռեաք նորա։
24 Զի լուծ նորա՝ լուծ երկա-
թի, և սամեռիք նորա՝ սամեռիք
պղնձիք։

25 Մահ չար՝ մահ նորա. և լա-
ւագոյն են դժոխք քան զնա:
26 Մի լիցի ձեռն նորա * բարե-
պաշտից, և 'ի բոց նորա մի այ-
րեսցին:
27 Ոյք թողին զՏէր՝ անկցին 'ի
ձեռս նորա, և 'ի նոսին վառեսցի,
և մի չիջցի. առաքեսցի 'ի վերայ
նոցա իբրև առիւծ, և իբրև ինձ
ապականեսցէ զնոսա:
28 Տեսջիր, ամրացո զստացուածս
քո փչաք:
29 Զոսկի քո, և զարծաթ պինդ
կապեա, և բանից քոց արա չափ
և կշիռ, և բերանոյ քո արա դուռն
և նիգ:
30 Զգոյշ լեր, գուցէ գայթագ-
ղիցես զնովաւ, գուցէ անկանիցիս
առաջի դարանակալի:

* Յոր. 'ի վերայ. Եդեռ ըստ յոյ-
նին:

Գլ. ԻԹ.

1 Որ առնէ ողորմութիւն, տայ փոխ մերձաւորին:
2 Որ ոյժտեաց ձեռամբ իւրով, պահեսցէ զպատուիրանս:
3 Տուր փոխ մերձաւորին 'ի ժամանակի. հաստատեա զբան, և լեր հաւատարիմ ընդ նմա, և յամենայն ժամանակի գտցես զսիրտս քո:
4 Բազումք իբրև զգիւտս համարեցան զփոխս, և աշխատ արարին զօգնականսն իւրեանց:
5 Մինչ առնուցուն, համբուրեսցէ զձեռս նորա. և 'ի վերայ ընչից մերձաւորին գեղցէ զձայն.
6 Եւ 'ի ժամանակի հաճելոյ, յապաղեսցէ զժամանակն. և հատուսցէ բանս կսկծելիս, և մեղադրեսցէ զժամանակն:
7 Եթէ կարող լինիցի, հազիւ առնուցու սիրտն. և համարեսցի զայն իբրև զգիւտս:

8 Այպա թէ ոչ՝ զրկէսայ զնա յըն-
չից իւրոց, և ստացաւ զնա թշնա-
մի 'ի զուր։
9 Անէծս և բամբասանս հատուս-
ցէ նմա, և փոխանակ փառաց՝ հա-
տուսցէ անարգանս։
10 Արդ բազումք յաղագս չա-
բութեան զերեսս դարձուցին, և
զրկել տարապարտուց կասկածե-
ցին։
11 Սակայն 'ի վերայ տառապե-
լոյ երկայնամիտ լեր, և վասն ո-
ղորմութեան մի յապաղեր զնա։
12 Վասն պատուիրանի ձեռնկա-
լու լեր աղքատին, և ըստ կարո-
տութեան նորա մի դարձուցաներ
զնա ունայն։
13 Կորո զարծաթ վասն եղբօր և
բարեկամի, և մի ժանկոտեսցէ ընդ
քարիւ 'ի կորուստ։
14 Դիր զգանձ քո ըստ պատուի-
րանաց Բարձրելոյն, և օգուտ է-
զնցի քեզ առաւել քան զոսկին։
15 Գուժարեա ողորմութիւն 'ի
չոքեմարանս քո, և այն փրկեսցէ
զքեզ յամենայն չարչարանաց,

16 Քան զասպար զօրութեան և
քան զնիզակ կշռոյ՝ յանդիման
թշնամւոյ Ճակատեսցի ընդ քեզ*։
19 Այլ բարեբար յերաշխի առ-
նէ զմերձաւորն. և որոյ կորուս-
սեալ զամսթ, բարձցէ թողցէ
զնա։
20 Զչնորհս երաշխաւորի մի մո-
ռանար, զի եա զանձն իւր վասն
քո։
22 Զբարիս երաշխաւորին 'ի չար
դարձուցանէ մեղաւորն, և անչը-
նորհակալն մոռաք թողցէ զփրկօղն։
24 Երաշխաւորութիւն բազում
աջողեալս կորոյս, և դեղևեաց զնո-
սա իբրև զալիս ծովու։
25 Զարս հզօրս էհան 'ի բնակու-
թենէ, և մոլորեցան յազգս օտա-
րոտիս։
26 Մեղաւորն անկցի յերաշխա-
ւորութիւն. և որ զհետ երթայ
գործաւորութեան, անկցի 'ի դա-
տաստան։

* Ի լատինոյս ընդ քո։

27 Պաշտպան լեր մերձաւորին ըստ զօրութեան քում, և զգոյշ լեր անձին՝ գուցէ 'ի ձեռս անկցիս։

28 Սկիզբն կենաց մարդոյ՝ ջուր և հաց և հանդերձ, և տուն՝ որ ծածկէ զնայոտառականս։

29 Լաւ են կեանք աղքատի ընդ յարկաւ գերանաց իւրոց՝ քան թէ կերակուրք պայծառք 'ի տունս այլոց։

30 Ի վերայ մեծի և փոքու հաճութիւն կալջիր։

31 Զար կեանք են տանէ 'ի տուն փոփոխել, և ուր պանդխտիցիսն՝ ոչ բանայցես զբերան։

32 Կոչունս առնիցես, և տացես ըմպել յանշնորհս, և առ այսոքիկ դառնիս լսիցես.

33 Եկ անց, պանդուխտ, պատրաստեա սեղան. և զինչ և իցէ 'ի ձեռին քում, կերակրեա զնս։

34 Եղ, պանդուխտ, յերեսաց փառաց, հիւրացեալ է ինձ եղբայրն 'ի պէտս տան։

35 Ծանիր են այսոքիկ մարդոյ՝ որ

ունիցի միտս, սանդաստականք *
տան, և նախատինք փոխատուի։

ԳԼ. Լ.

1 Որ սիրէ զորդի իւր՝ յաճախեսցէ զտանջանս նորա, զի ուրախ լիցի 'ի վերջայն նորա։
2 Որ խրատէ զորդի իւր՝ գտցէ օգուտ 'ի նմանէ, և 'ի մէջ ծանօթից 'ի նա պարծեսցի։
3 Որ ուսուցանէ զորդին՝ նախանձեցուցանէ զթշնամին, և առաջի բարեկամաց 'ի նա պարծեսցի։
4 Վախճանեցաւ հայր նորա, և որպէս թէ ոչ մեռաւ. զի նմանող եթող յետ իւր։
5 Ի կեանս իւր ետես, և ուրախ եղև. և 'ի վախճանի իւրում ոչ տրտմեցաւ։
6 Յանդիման թշնամեաց եթող վրէժինդիր, և բարեկամաց՝ հաստուցանող շնորհաց.

* Յոյ. անդաստականք։

7 Որ գրգէ զորդին իւր, պատեա-
ցէ զվէրս նորա, և յամենայն բար-
բառ խռովեսցին աղիք նորա:
8 Զի անվարժ եղանէ խիստ, և
որդի ընդվայրասուն եղանէ լիսի:
9 Գգուեա զորդի, և զարհուրե-
ցուսցէ զքեզ. խաղա ընդ նմա, և
տրտմեցուսցէ զքեզ:
10 Մի ծիծաղիր ընդ նմա՝ զի մի
ցաւագնեսցիս, և ապա յետոյ բը-
թեսցէ զատամունս քո *:
11 Մի տար նմա իշխանութիւն
'ի մանկութեան, զարդեա զկողս
նորա մինչդեռ տղայ է.
12 Գուցէ երբեք խստացեալ ըս-
տուգիանեսցէ զքեզ:
13 Խրատեա զորդի քո և վարեա
զնա 'ի գործ, զի մի 'ի խայտառա-
կանս անկանիցիս.

* Յօր. զարմատս քո. ուղղեցաւ ըստ յունին:

Վասն առողջութեան։

14 Լաւ է աղքատ առողջ և զօրաւոր պայմանաւ, քան մեծատուն՝ որ հաշմեալ է 'ի մարմին իւր։

15 Առողջութիւն և առոգութիւն լաւ է քան զամենայն ոսկի, և մարմին կարօղ՝ քան զմեծութիւն անչափ։

16 Ոչ գոյ մեծութիւն լաւ քան զառողջութիւն մարմնոյ. և ոչ գոյ ուրախութիւն քան զհնդութիւն մարմնոյ։

17 Լաւ է մահ քան զդառն կեանս կամ ցաւս յերկարս։

18 Բարիք զեղեալ 'ի վերայ բերանոյ փակելոյ, դիրք կերակրոց առընթերակաց գերեզմանի։

19 Զինչ օգուտ են ողջակէզք կռոց, զի ոչ ուտեն և ոչ հոտոտեսցին։

20 Այսպէս որ հալածիցին 'ի

Տեառնէ. տեսանիցէ աչօք, և սու-
նայնիցէ։
21 Իբրև նեղքինէ՝ որ գիրկս ար-
կանիցէ կուսի, և յոգւոց հանի-
ցէ։
22 Մի տար 'ի տրտմութիւն զանձն
քո, և մի նեղեսցես զքեզ 'ի խոր-
հուրդս քո։
23 Ուրախութիւն սրտի՝ կեանք
մարդոյ, և ցնծութիւն մարդոյ՝
երկայնութիւն աւուրց։
24 Սփոփեա զանձն քո, և մխի-
թարեա զսիրտ քո, և զարտմու-
թիւն հեռի արա 'ի քէն։
25 Զի զբազումս եսպան տրտմ-
ութիւն, և ոչ գոյ օգուտ 'ի նմա-
նէ։
26 Նախանձ և արտմութիւն,
նուազեցուցանեն զաւուրս, և յա-
ռաջ քան զժամանակն ածեն ալիս
հոգք։
16 Իբրև զձուաքաղ զհետ կթող-
ացոյ,
17 Յօրհնութիւն Տեառն հասի.
և որպէս կթող լցուցի հնձան։
16 Մի՛ դիք՝ զի ոչ ես ինձ միայ-

նոյ վաստակեցի, այլ ամենեցուն՝ որ ինդբեն զնարատ։

19 Լուարուք ինձ, մեծամեծք ժողովրդեան, և ունկն դիք, առաջնորդք եկեղեցւոյ։

20 Որդւոյ և կնոջ, եղբօր և բարեկամի մի տացես իշխանութիւն 'ի վերայ քո 'ի կեանս քո. և մի տար այլում զինչս քո, զի մի՛ զըղջացեալ կարօտասցիս նոքօք։

21 Մինչ դեռ կենդանի ես, և շունչդ 'ի քեզ է, մի փոխանակեր զքեզ ընդ ամենայն մարմնոյ։

22 Զի լաւ է՝ թէ որդիքն քեւ կարօտասցին, քան թէ դու հայեսցիս 'ի ձեռս նոցա։

23 Յամենայն 'ի գործս քո լիջիր վերագոյն։

24 Մի՛ տար պարսաւանս 'ի փառս քո. յաւուրս կատարման կենաց քոց և 'ի ժամանակս վախճանի, բաշխեա և տուր ժառանգութիւն։

Վասն ծառայից։

25 Բուտ և բիր և բեռն՝ իշոյ, հաց և գան և գործ՝ ծառայից։
26 Գործեա գործ ծառայիւ, և գտցես հանգիստ. դատարկացո զձեռն նորա, և խնդրեսցէ ազատութիւն։
27 Լուծ և սամեռիք զպարանոց խոնարհեցուցանեն, և ծառայի չարագործի լլկանք և տանջանք։
28 Արկ զնա 'ի գործ, զի մի դատարկասցի։
29 Զի բազում չարիս ուսոյց դատարկութիւն։
30 Ի գործ կացո զնա, որպէս վայելէ նմա. և թէպէտ ոչ հնազանդիցի, ծանրացո զկապանս, և մի առաւելուր յամենայն մարմին. և առանց իրաւանց մի ինչ առնիցես։
31 Եթէ իցէ քո ծառայ՝ եղիցի իբրև զքեզ, զի արեամբ ստացար զնա։ Եթէ իցէ քո ծառայ, կալ

զնա իբրև զեղբայր. զի որպէս ան-
ձին քո, այնպէս կարօտասցիս նո-
վաւ:
32 Եթէ չարչարեսցես զնա, և
սարտուցեալ փախնուցու,
33 Յորո՞ւմ ճանապարհի խնդրես-
ցես զնա:

ԳԼ. ԼԱ.

Վասն երազոց:

1 Վայրապար * և սուտ են յոյսք
առն անմտի. երազք թռուցանեն
զանղգամսն:
2 Թէ որ բռնիցէ զստուերէ, և
զհետ երթայցէ հողմոյ, այնպէս
որ գնիցէ միտ երազոյ:
3 Այս ինչ ընդունայն է տեսիլ
երազոց. յանգիման դիմաց՝ նմա-
նութիւն դիմաց:

* Յոր. վայրապար է. եդաւ ըստ
յունին:

4 ի պղծոյն զինչ սրբեսցի, և 'ի
սրոյն զինչ սուրբեսցի։
5 Ըղձութիւնք և հաւադիտու-
թիւնք և երազք ընդունայն են։
6 Իբրև զայն որ երկնիցէ՝ բան-
դագուշի սիրան, եթէ ոչ 'ի Բար-
ձրելոյն առաքիցի այցելութիւն։
7 Մի՛ տար զնոսա 'ի սիրտ քո. զի
զբաղումս մոլորեցուցին երազք,
և վրիպեցուցին որք յուսացան 'ի
նա։
8 Առանց ստութեան կատարես-
ցին օրէնք, և իմաստութիւն հա-
ւատարիմ բերանոյ կատարումն։
9 Այլ թափառական գիտաց բա-
զում ինչ. և որ բազմատեղեակն
է, պատմեսցէ զհանճար։
10 Որ ոչ սո՛ւ զփորձ, սակաւ ինչ
գիտէ. իսկ որ յածեալն՝ յաճա-
խեսցէ 'ի խորագիտութեան։
12 Բազում ինչ տեսի 'ի յածման
իմում, և յոլովք 'ի բանից իմոց՝ ի-
մաստութիւն իմ։
13 Բազում անգամ ցմահ վտան-
գեցայ, և ապրեցայ յաղագս այ-
սորիկ։

14 Հոգի երկիւղածաց Տեառն կեցցէ,
15 Զի յոյս նոցա յապրեցուցիչն իւրեանց:
16 Որ երկնչի 'ի Տեառնէ, ոչ յուսիցէ կասկածեսցէ. և մի՛ վատասրրտեսցէ, զի նա է յոյս նորա:
17 Որ երկնչի 'ի Տեառնէ, երանելի է անձն նորա:
18 Ցո՞ ապաստան լինիցի, և ո՞վ է հաստատութիւն նորա:
19 Աչք Տեառն 'ի սիրելիս նորա. պաշտպանութիւն զօրութեան նորա, և հաստատութիւն ուժոյ. ծածկոյթ 'ի խորշակէ, և վերարկու 'ի մէջորէի:
20 Պահպանութիւն 'ի գայթագղութեան, և յարուցիչ 'ի գլորմանէ. բարձրացուցանէ զհոգի, և լուսաւորէ զաչս. բժշկութիւն տան, օրհնութիւն և կեանս մարդկան:
21 Որ զոհէ յանիրաւութենէ՝ պատարագ արհամարհեալ, և չէն 'ի հաճութիւն պատարագ անօրինաց:

23 Ոչ հաճի Բարձրեալն ընդ պա-
տարագս ամպարշտաց. և ոչ բաղ-
մութեամբ պատարագաց քաւէ
զմեղս։
24 Զենու զորդի առաջի հօր իւ-
րոյ՝ որ մատուցանէ պատարագ
յընչից օտարաց։
25 Հաց կարօտելոց, կեանք աղ-
քատաց. և որ զրկէն զնոսա, այր
է արեանց։
26 Սպանանէ զմերձաւորն՝ որ հա-
նէ զպախրէ։
27 Եւ հեղու արիւն՝ որ զանայ
զվարձս վարձկանի։
28 Մին շինէ, և միւսն աւերէ,
զի՞նչ աւելն օգուտ իցէ՝ բայց ջան։
29 Մին աղօթս առնէ, և միւսն
անիծանէ, ո՞յր ձայնի լուիցէ Տէր։
30 Որ մկրտիցի 'ի մեռելոյ, և դար-
ձեալ հպեսցի 'ի նա, զի՞նչ օգտե-
ցաւ 'ի լուանալոյն իւրոյ։
31 Որպէս մարդ՝ որ պահիցէ վասն
մեղաց իւրոց, և դարձեալ գնայցէ
և զնոյնսն առնիցէ, աղօթիցէ նորա
ո՞ լսիցէ, և զի՞նչ օգտեցաւ 'ի խո-
նարհելն իւրում։

ԳԼ. ԼԲ.

1 Որ պահէ զօրէնս, յաճախէ զպատարագս։
2 Մատուցանէ զոհ փրկութեան, որ միտ դնէ պատուիրանաց։
4 Փոխարէն շնորհս հատուցանէ, որ մատուցանէ նաշիհ. և որ առնէ ողորմութիւն, պատարագ օրհնութեան։
5 Հաճութիւն Տեառն, 'ի բաց կալ 'ի չարութենէ. և քաւութիւն, 'ի բաց կալ յանիրաւութենէ։
6 Մի երևիր երեսաց Տեառն ձեռնունայն,
7 Զի ամենայն այսոքիկ վասն պատուիրանի։
8 Պատարագ արդարոյ՝ պարարէ զսեղան, և անուշահոտութիւն նորա առաջի Տեառն։

9 Զոհ առն արդարոյ՝ ընդունելի,
և յիշատակ նորա ոչ մոռացի։
10 Առատ ակամբ փառաւորեա
զՏէր, և մի առներ գձուձ զպտուղ
ձեռաց քոց,
11 Յամենայն պտուղս և 'ի տուրս
զուարճացո զդէմս քո, և ուրա-
խութեամբ սրբեա զտասանորդս։
12 Տուր Բարձրելոյն ըստ տրոց
նորա, և առատ ակամբ զգիւտ
ձեռաց։
13 Զի տէր հատուցանող է, և
եօթնապատիկ հատուսցէ քեզ։
14 Մի որպէս կաշառ հատուցա-
ներ, զի ոչ ընդունի։
15 Եւ մի ապաստան լինիր 'ի զոհ
անիրաւ, զի Տէր դատաւոր է, և
ոչ գոյ առ նմա փառք երեսաց։
16 Ոչ առցէ ակն աղքատի, և ա-
զօթից զրկելոյ լուիցէ։
17 Ոչ առնէ անտես զպաղատանս

որբոց, և զայրի՝ եթէ հեղցէ զա-
ղօթս։

18 Զէ ապաքէն արտասուք այրեաց
զծնօտիւք իջանեն, և կառաչ նորա
'ի վերայ իջուցանեալեաց նորա։

20 Որ պաշտէ հաճութեամբ, ընդ-
դունելի եղիցի. և խնդրուածք նո-
րա մինչև յամպս կցեսցին։

21 Աղօթք տառապելոյ անցցեն
ընդ ամպս*, և մինչև մերձ լինիցեն՝
ոչ մխիթարեսցին. և ոչ կացցեն 'ի
բաց՝ մինչև այց արասցէ Բարձ-
րեալն,

22 Եւ արասցէ դատ արդարոց,
և հանցէ իրաւունս. Տէր ոչ յա-
մեսցէ, և ոչ երկայնամիտ լինի-
ցի 'ի վերայ նոցա, մինչև փշրեսցէ
զմէջս անողորմից, և հեթանոսաց
հատուսցէ վրէժս։

23 Մինչև բարձցէ զբազմութիւն
թշնամանողաց, և զգաւազանս ա-
նիրաւաց բեկտեսցէ։

24 Մինչև հատուսցէ արդարոց
ըստ գործոց իւրեանց, և զգործս

* Յօր. պակասէր ընդ ամպս. եդաւ
'ի յոռնէն։

մարդկան ըստ խորհրդոց իւրեանց։
25 Մինչև դատեսցի զդատաս-
տան ժողովրդեան իւրոյ, և ուրախ
արասցէ զնոսա ողորմութեամբ
իւրով։
26 Վայելուչ է ողորմութիւն 'ի
ժամանակի նեղութեան նորա, որ-
պէս ամպք անձրեւաց՝ յերաշտ
ժամանակի։

ԳԼ. ԼԳ.

1 Ողորմեա մեզ, Տէր Աստուած
ամենայնի, և հայեաց։
2 Արկ զահ քո յամենայն հեթա-
նոսս։
3 Համբարձ զձեռս քո 'ի վերայ
ազգաց օտարաց, և տեսցեն զզօ-
րութիւն քո։
5 Որպէս առաջի նոցա սրբեցար
'ի մեզ, սոպէս առաջի մեր մեծաս-
ցիս 'ի նոսա. և ծանիցեն զքեզ՝ որ-
պէս և մեք ծանեաք, զի ոչ գոյ
Աստուած բաց 'ի քէն Տէր։

6 Նորոգեա զնշանս, և փոփոխեա զաքանչելս։
7 Փառաւորեա զձեռն և զաջ բազկի քոյ։
8 Յարս զարամարութիւն, և հեղ զբարկութիւն։
9 Բարձ զախոյեան, և ընկեա ընդ թշնամին։
10 Փոյթ կալ ժամանակի, և յիշեա զժամագիր. և պատմեսցեն ընդ մեծութիւնս քո։
11 Բարկութեամբ հրոյ վատնեսցի ապրեալն. և ոչք չարչարեն զժողովուրդ քո, գայցեն զկորուստ։
12 Փչեա զգլուխ իշխանաց թշնամեաց, ոչք ասեն՝ չէ ոք բաց 'ի մէնջ։
13 Ժողովեա զամենայն ցեղս Յակոբայ. սիրտ պայծառ և առատ 'ի խորհրդոյ կերակրոյ իւրոյ փոյթ կալցի։

ԳԼ. ԼԳ.

1 Տքնութիւն մեծութեան * հա-
լէ զմարմինս, և հիւանդութիւն
ծանր զարթուսցէ զքուն:
2 Հոգք տքնութեան պահանջես-
ցէ զնիրհ:
3 Աշխատեցաւ մեծատունն 'ի
ժողովել զինչս, և 'ի հանգստեան
յապէցաւ շուայտութեամբք նո-
ցա:
4 Աշխատեցաւ անանկն 'ի նուա-
զութեան կենաց, և 'ի հանդըս-
տեան կարօտ լինի:
5 Որ սիրէ զոսկի, ոչ արդարաս-
ցի. և որ սիրէ զապականութիւն,
ինքն լցցի:
6 Բազումք տուան 'ի կործա-
նումն ոսկւոյ, և եղև կորուստ նո-
ցա յանդիման նոցին:
7 Փայտ գայթագղութեան է այ-

* Յօր. Տքնութեան մեծութիւն.
եգաս ըստ յոռնին:

նոցիկ, որ զոհէն նմա. և ամենայն անմիտ ըմբռնեսցի նովաւ։

8 Երանեալ է մեծատուն՝ որ գըտաւ անարատ, և զհետ ոսկւոյ ոչ չոգաւ։

9 Ո՞վ իցէ, երանի տացուք նմա. զի արար զարմանալիս 'ի ժողովրդեան իւրում։

10 Ո՞վ փորձեցաւ նովաւ, և կատարեալ եղև. և եղիցի նմա 'ի պարծանս. ո՞վ էր կարող զանց առնել՝ և ոչ անց, և առնել չարիս՝ և ոչ արար։

11 Հաստատեսցին բարիք նորա, և զողորմութիւնս պատմեսցէ եկեղեցի։

12 Ի սեղան 'ի մեծ նստարս մի բանար 'ի նմա զկոկորդ քո։

13 Եւ մի ասիցես՝ շատ է որ կայս 'ի սմա։

14 Ցիշեա զի յոռի է տկն չար, չարագոյն քան զամն զի՞նչ հատատեցաւ։

15 Վասն այսորիկ յամենայն գիմաց արտասուէ։

16 Ուր և հայիցիս՝ մի ձգեր ձեռն։

17 Եւ մի Ճեպէր 'ի մաղագմի նո-
բա։
18 Իմա՝ զմերձաւորին 'ի քէն. և
յամենայն իրի մոռանարհ լեր։
19 Կէր որպէս մարդ՝ որ ինչ կայն
առաջի քո, և մի ծանծաքէր՝ գու-
ցէ ասիցես։
20 Դադարեա նախ վասն խրա-
տու, և մի Ժլատեր՝ գուցէ գայթէ-
ցիս։
21 Եւ եթէ 'ի մէջ բազմաց նըս-
տար, յոռաջ քան զնոսա մի ձըգ-
տեր զձեռն քո։
22 Որպէս զի բաւական է մարդոյ
խրատելոյ սակաւն, և յանկողնի
իւրում ոչ հեծէ։
24 Քուն առողջութեան 'ի վերայ
չափաւոր ազոյ. յարեաւ այգուց,
և անձն նորա ընդ նմա։
23 Ցաւք ոչնութեան և մաղձա-
յուզն, և խելք որովայնի ընդ առն
Ժլատի։
25 Եւ եթէ բռնադատեցար 'ի
կերակուրս՝ արի կիսով, և հանգի-
ցես։
26 Լուր ինձ որդեակ, և մի ան-

գոնիցես զնս *. և 'ի վերջէ գըտ-
ցես զբանս իմ:
27 Յամենայն 'ի գործս քո լեր
կայտառ, և ամենայն հիւանդու-
թիւն ոչ պատահեսցէ քեզ:
28 Զխրախճանս հայցի օրհնեսցեն
շրթունք, և վկայութիւն լաւու-
թեան նորս հաւատասցիմ:
29 Զվատթարէն 'ի հայցի՝ սըբ-
ամընչեսցէ քաղաք. և վկայութիւն
յոռութեան նորա ճշմարիտ:
30 Ի գինւոջմի՛ քաջանար, զի զբա-
զումս կորոյս գինի:
31 Բովք փորձեն զայրագիսս 'ի
մուխ, որպէս և գինի զսիրտս ** հը-
պարտից 'ի կատ:
32 Հաւասար է գինի կենդանու-
թեան մարդկան, եթէ ըմպիցես
զնա չափով իւրով:
33 Զինչ կեանք ի՞ցեն կարօտե-

* Յօր. անկոանիցիս, և 'ի վերջէ.
իգաա ըսա յոյն բնագրին:
** Յօր. պակասէր գինի զ. ուղղեցաա
ըսա յոանին:

լայն 'ի գինուոյ, և նա հաստատեալ
է յուրախութիւն մարդկան։
36 Ցնծութիւն սրտի և ուրախու-
թիւն անձին՝ գինի որ ըմպիցի 'ի
ժամուց բաւական։
38. 39 Դառնութիւն անձին գի-
նի, որ ըմպիցի շատ՝ գրգռութեամբ
և հակառակութեամբ։
40 Յառաջիկ արբեցութիւն զցա-
սումն անզգամի 'ի գայթագղու-
թիւն. կասեցուցանէ զոյժ, և գնէ
վէրս։
41 Ի գինեբբուս գինուոյ մի յան-
դիմաներ զմերձաւորն, և մի ան-
գոսներ զնա յուրախութեան նո-
րա։
42 Բան նախատանաց մի ասիցես
նմա, և մի նեղեր զնա պահանջ-
մամբ։

ԳԼ. ԼԵ.

1 Առաջնորդ կացուցին ըզքեզ, մի
հպարտանար. լեր 'ի միջի նոցա ի-
բրև զմի 'ի նոցանէ։

2 Հոգ տար նոցա, և տուա նիստ. և զամենայն ոչխաս նոցա արարեալ՝ բազմեաց, զի ուրախ լիցիս վասն նոցա։

3 Եւ վասն բարեկարգութեան ուռնուցուս պսակ։

4 Խօսեաց՝ ծեր, զի վայելէ քեզ, Ճշմարտութեամբ գիտութեամբ.

5 Եւ մի խափաներ զերաժիշտ։

6 Ուր ունկնդրութիւն է՝ մի լայ. ներ զխօսս, և 'ի զուր մի խմասա. նանար։

7 Ակն լուսաւոր՝ զարդ ոսկւոյ։

8 Ի կազմածի ոսկւոյ՝ ակն զըմ. բուխտ, նուագ երաժշտականաց 'ի քաղցր գինւոջ։

10 Խօսեա, երիտասարդ, եթէ ի. ցէ քո պէտք. հաղիւ՝ թէ երկիցս հարցանիցիս։

11 Գլխաւորեա զբան՝ սակաւուք բազումս։

12 Լեր իբրև զայն՝ որ գիտէ. և ընդ նմին լուռ լինի։

13 Ի մէջ մեծամեծաց՝ մի զոյդ լինիջիր. և ուր ասողք իցեն՝ մի շաղփաղփեր։

14 Յառաջ քան զորամուն՝ փութան փայլատակմունք. և նախ քան զամպ զածն յառաջեսցէ զբնորհ:

15 Ի ժամուց զարթիր, և մի յեանիցես. ընթա՛ի տուն քո, և մի ծուլանար:

16 Անդ խաղասջիր և արասջիր զկամս քո, և մի մեղջք և ամբարտաւանութեամբ:

17 Ի վերայ այսոցիկ օրհնեա զարարիչն քո, որ արբուցանէ զքեզ՛ի բարեաց իւրոց:

18 Որ երկնչի՛ի Տեառնէ, ընկալցի զնրատ. և ոչք առաւօտեն առնա, գտցեն հաճութիւն:

19 Որ խնդրէ զօրէնս, լցցի նովաւ. և որ կեղծաւորեսցին, գայթագղեսցին նովիմբք:

20 Ոչք երկնչին՛ի Տեառնէ, գըտցեն իրաւունս. և զարդարութիւնս իբրև զլոյս վառեսցեն:

21 Այր մեղաւոր խորշի յանդիմանութենէ, և ըստ կամաց իւրոց գտցէ օրինակս:

24 Առանց խորհրդեան մի՛ինչ առնիցես՝ և մի յառնեալն զղջանար:

23 Անանց խորհրդոյ ոչ անտես ա-
բասցես զիմացումն։
22 Օտարոտին և ամբարտաւանն
ոչ զարհուրեսցին յերկիւղէ։

ԳԼ. ԼԸ.

15 Որ մեղանչէ՝ առաջի արարչին
իւրոյ, անկցի 'ի ձեռս բժշկի։
16 Որդեակ, 'ի վերայ մեռելոյ եկո
արտասուս. և իբրև թէ չարիս կրեալ
լցէ, սկիզբն արա ողբոյ. և ըստ
իրաւանց նորա զսպեա զմարմին նո-
րա. և մի անտես առնելոր զթաղումն
նորա։
17 Դառնացո զաղիս, և ջերմացո
կոծ, և արա զսուգն ըստ արժանի
նորա,
18 Օր և երկուք վասն բասրա-
նաց, և մխիթարեա վասն տրտմու-
թեան։
19 Զի 'ի տրտմութենէ ելանէ
մահ, և տրտմութիւն սրտի կորա-
ցուցանէ զոյժ։
20 Ի հարուածս կայ մնայ և սրբա-

մութիւն, և կեանք անանկի սըրտակեթ։

21 Մի տար 'ի տրտմութիւն ըզսիրտ քո. 'ի բաց տար զնա, յիշեա զառյաստպյան։

22 Մի մոռացիս, զի ոչ գոյ դարձ. և նմա օգուտ ոչ առնիցես, և զինքնըդ չարչարեսցես։

23 Յիշեա զդատաստանն իմ, զի այսպէս և քոյն. ինձ երէկ և քեզ այսօր։

24 Ի հանգչել մեռելոյ՝ հանգիստ արա յիշատակի նորա, և մխիթարեաց 'ի նա յելանելոյ հոգւոյ նորա։

25 Իմաստութիւն գրչի 'ի զիւրութիւն պարապոյ, և որ կարօտ է՝ ջանասցի, և նա իմաստանասցի։

26 Զինչ իմաստանասցի՝ որ ունիցի զմատաղոյ. պարծեսցի 'ի ցուպ իւրեանի, եզինս վարիցէ, և զբաղնուցու 'ի գործ իւր, և զրոյց նորա յորդիս զուարակաց։

27 Զսիրտ իւր տացէ 'ի ձգել ակօս, և տքնութիւն նորա 'ի դարման ընկղոց.

28 Նոյնպէս ամենայն հիւան և
ճարտարապետ, որ 'ի գիշերի ի-
բրև 'ի տունջեան կայ. որք գրաշէն
զգրօշս քանդակաց, և պարապուս-
թիւն նորա նորոգել զանազանու-
թիւն. զսիրտ իւր տացէ 'ի նմանե-
ցուցանել նկարս, և տքնութիւն
նորա՝ կատարել գործ:

29 Նոյնպէս և գտրբին՝ որ նատ-
ցի մօտ առ սալի, և նկատէ * զգործ
երկաթոյ. գոլշի չար հալեսցէ ըղ-
մարմինս նորա, և 'ի տապ բովոց
ոգորիցի:

30 Զայն ուռան գոլգեսցէ զուռնին
նորա. և յանդիման նմանութեան
անօթոյ՝ աչք նորա:

31 Զսիրտ իւր տացէ 'ի կատա-
րումն գործոյ. և տքնութիւն նորա
առ 'ի պահանջել 'ի կատարման
նորա:

32 Այսպէս բրուտ, որ նատիցի
'ի գործ իւր, շրջիցէ ոտիւք իւրովք
զդուրդն. որ 'ի հոգս կայ հանա-

* Յօր. նկարէ. ՈՒՂՂԵՑԱԼ ԵՍՓ ՅՈՒ-
ՆԻՆ:

պաղ վասն գործոյ իւրոյ, և թիւ
է ամենայն գործ նորա։

33 Բազկաւ իւրով յօրինեսցէ
զկաւ, և առաջի ոսկոյ խոնարհե-
ցուսցէ զզօրութիւն իւր։

34 Զսիրա իւր տացէ առ 'ի վճա-
ռել զծեռն, և տքնութիւն նորա՝
մաքրել զթրծոց։

35 Ամենեքեան սոքա 'ի ձեռս իւ-
րեանց վատահ են, և իւրաքանչիւր
'ի գործս իւր ճարտարէ։

36 Առանց սոցա ոչ շինեսցի քա-
ղաք.

37 Եւ ոչ պանդխտեսցին *, և ոչ
շրջեսցին. և յերկիրս ցաւոյ յաւաղ
ոչ մտանիցեն։

38 Յաթոռ դատաւորի ոչ նստե-
ցին, և զուխաս իրաւանց զմտաւ
ոչ ածցեն. և ոչ երևեսցուսցեն հան-
ճարով զիրաւն, և յաւակս ոչ գրա-
ցին։

39 Այլ շինուած աշխարհի հաս-
տատեսցեն, և ինդրուած նոցա 'ի

* Յոր. Եւ պանդխտեսցին. Եդա-
ռոպ յանին։

գործ արուեստի. բայց յայնմանէ՝ որ տացէ զանձն իւր, և մտախորհ լինիցի յօրէնս Բարձրելոյն։

ԳԼ. ԼԹ.

1 Զիմաստութիւն ամենայն առաջնոցն քննեսցէ, և 'ի մարգարէութիւնս պարապեսցի։
2 Զպատմութիւնս արանց անուանեաց 'ի մտի կալցի, և 'ի դարձուածս առակաց մտցէ։
3 Զգաղտնիս առակաց խնդրեսցէ, և 'ի նշանակս առակաց յածեսցի։
4 Եւ 'ի մէջ մեծամեծաց սպասաւորեսցէ, և առաջի առաջնորդաց երևեսցի։
5 Յերկիր օտարոտեաց ազգաց անցցէ, զի չարեաց և բարեաց մարդկան փորձ առցէ։
6 Զսիրտ իւր տացէ առաւօտեալ առ Տէրն, որ արարն զնա. և յանդիման Բարձրելոյն պաղատեսցի։
7 Եւ բացցէ զբերան իւր յաղօթս,

վան մեզայ իւրոյ խնդրուածս ա-
բասցէ, եթէ Տէր մեծ կամեսցի։
8 Հոգւով հանճարոյ լցցի։
9 Զի նա 'ի վերբ բխեսցէ զբանս
խմաստութեան նորա, և աղօթիւք
խոստովան եղիցի նմա։
10 Նա ուղղեսցէ զխորհուրդս նո-
րա մտախորհ եղիցի։
11 Նա երևեցուսցէ զվարդապե-
տութիւն 'ի վարժմանն նորա, և յօ-
րէնս ուխտի Տեառն պարծեսցի։
12 Գովեսցեն զխմաստութիւն նո-
րա բազումք, և մինչև յաւիտեան
մի եղծցի։
13 Ոչ կացցէ 'ի բաց յիշատակ նո-
րա, և անուն նորա կացցէ յազգս
ազգաց։
14 Զգծնութիւն նորա պատմեսց-
էն ազինք, և զգովութիւն նորա
պատմեսցէ եկեղեցի։
15 Եթէ կեցցէ, անուն թողուցու-
քան թէ հազարք. և թէպէտ և
հանգիցէ, լաւ է նմա։
16 Դարձեալ զմտաւ ածեալ պատ-
մեցից, և իբրև զմիջնաբուսին լցայ։
17 Լուարուք ինձ սուրբք, և ծաղ-

կեցէք որպէս զվարդենի բուսեալ
'ի գնացս Ջուրց։

18 Եւ որպէս կնդրուկ անուշա-
հոտ բուրեցէք հոտ։

19 Եւ ծաղկեցէք ծաղիկ իբրև
զշուշան. հարէք հոտ, և օրհնեցէք
երգ, օրհնեցէք զՏէր 'ի գործս ա-
մենայն։

20 Տուք անուան նորա մեծու-
թիւն, և խոստովան եղերուք օրհ-
նութեան նորա. երգովք շրթանց
և տաղի՝ այսպէս ասասջիք դոհա-
յողութեամբ։

21 Գործք Տեառն են ամենայն,
զի բարի են յոյժ. և ամենայն
հրաման 'ի ժամանակի իւրում է-
զնցի. չէ ասել՝ թէ զի՞ այս, կամ՝
հի՞մ՝ այս. զի ամենայն 'ի ժամա-
նակի իւրեանց խնդրեսցի։

22 Բանիւ նորա եկաց իբրև ըզ-
դէզ Ջուր, և պատգամաւ բերա-
նոյ նորա շտեմարանք Ջրոց։

23 Հրամանաւ նորա հաճութիւն,
և ոչ ոք է որ նուազեցուցանէ զփըր-
կութիւն նորա։

24 Գործ ամենայն մեկոյ առա-

ջի նորա, և ոչ գոյ թաքչէլ յաչաց նորա։

25 Յաւիտենից յաւիտեանս հայեցաւ, և չէ ինչ զարմանալի առաջի նորա։

26 Զի ասել՝ թէ զի՞ այս, կամ էր այս. զի ամենայն 'ի պէտս իւրեանց հաստատեալ են։

27 Օրհնութիւն նորա իբրև ըզգեաց ծածկեաց, և որպէս հեղեղ զցամաք՝ արբոյց։

28 Այսպէս զբարկութիւն նորա հեթանոսք ժառանգեսցեն։

29 Որպէս դարձոյց զջուրս յաղաջուրս. Ճանապարհք նորա սրբոց ուղիղ են, որպէս անօրինաց ոտնառութիւնք։

30 Բարիք բարեաց հաստատեալ են 'ի սկզբանէ, որպէս մեղաւորաց չարիք։

31 Սկիզբն ամենայն պիտոյից՝ 'ի կեանս մարդոյ, ջուր և հուր, երկաթ և աղ, և նաւիհ ցորենոյ։

32 Եւ կաթն և մեղր, արիւն խաղողոյ և ձէթ և հանդերձ, ամենայն այս բարեպաշտից բարի է։

33 Որպէս և մեղաւորաց դարձցի
'ի չարիս *, և հոգիք որ 'ի վրէժ-
խնդրութիւն հաստատեցան, և
սրբամտութեամբ իւրեանց սատ-
կացուցին զտանջանս իւրեանց:
34 Ի ժամանակի վախճանի՝ զո-
րութիւն զեղուն, և զցասումն ա-
ղարչին իւրեանց հանգուցցէն:
35 Հուր, կարկուտ և սով և մահ.
ամենայն այս 'ի վրէժխնդրութիւն
հաստատեալ է:
36 Գազանաց ժանիք և իժք և
քարբք և սուր՝ առնուլ վրէժ 'ի
սատակումն ամբարշտաց:
37 Ի պատուիրան նորա ուրախ
եղիցին, և 'ի վերայ երկրի 'ի պէտս
պատրաստեսցին, և 'ի ժամանակս
իւրեանց ոչ անցանեն ըստ բան:
38 Վասն այսորիկ 'ի սկզբանէ
հաստատեցայ, և զմտաւ ածի, և
գիրս թողի:
39 Զի գործ Տեառն ամենայն բա-

* Յօր. դարձ 'ի չարիս. ուղղեցաւ
ըստ յունին:

րի են, և զամենայն պէտս 'ի ժամու
իւրում բաշխեսցէ։
40 Եւ ոչ է ասել՝ թէ այս քան
զայս յոռագոյն է. զի ամենայն
ինչ 'ի ժամանակի ընտիրք եղիցին։
41 Եւ այժմ ամենայն սրտիւ և
բերանով օրհնեցէք և բարեբանե-
ցէք զանուն Տեառն։

Գլ. Խ.

1 Զբաղումն մեծ հաստատեալ է
ամենայն մարդոյ, և լուծ ծանր 'ի
վերայ որդւոց Ադամայ, յօրէ ելա-
նելոյ մօր իւրոյ՝ մինչև յօր թաղե-
լոյ 'ի մայրն ամենեցուն։
2 Զխորհուրդս նոցա և զահ սըր-
տի, մտածութիւն ակնկալութեան,
օր վախճանի։
3 Յայնմանէ՝ որ նստիցի յաթոռ
փառաց, մինչև ցայն՝ որ թշուա-
ռացեալ է 'ի հող և 'ի մոխիր։
4 Յայնմանէ՝ որ զգեցեալ է յա-
կինթ և պսակ, մինչև ցայն՝ որ ա-
զանիցի ցլափսի, ցասումն և նա-

խանդ՝ խռովութիւնև տատանումն, երկիւղ մահու և ոխք, հակառակութիւն:

5 Եւ 'ի Ժամանակի հանգստեան յանկոյնի, քուն գիշերոյ այլայլե զգիտութիւն նորա:

6 Խուն մի իբրև զոչինչ 'ի հանգստեան, և յայնմհետէ երազովք իբրև 'ի տուընջեան աշխատի:

7 Սարտուցեալ 'ի տեսլեան սըրտի իւրոյ իբրև զայն՝ որ փրծանիցի յերեսաց պատերազմի. 'ի Ժամանակի փրկութեան զարթեաւ, և սխրացեալ յոչինչ երկիւղէ:

8 Ընդ ամենայն մարմնոց մարդոյ մինչև ցանատուն. և 'ի վերայ մեղաւորաց՝ եօթնապատիկ քան զսոյն:

9 Մահ և հակառակութիւն, և արիւն և սուր, հարուածք և սով, բեկումն և տանջանք, 'ի վերայ անօրինաց արարաւ այս ամենայն:

10 Եւ վասն նոցա եղև ըստեղծն:

11 Ամենայն ինչ՝ որ յերկրէ է, և յերկիր դառնայ, և 'ի ջրոց 'ի ծով դառնայ. այսպէս ամբարիշտք՝ 'ի նզովից 'ի կորուստ:

12 Ամենայն կաշառ և անիրաւութիւն եղծցի, և յաւիտեան կացցեն հաւատք։

13 Ինչք անիրաւաց խբրև զգեստ ցամաքեսցին. և որպէս զորոտումն մեծ յանէրևի գոչեսցէ։

14 Ի բանալ նորա զձեռն՝ ուրախ եղիցի. այնպէս որք զանցանեն՝ 'ի վախճանի ցամաքեսցին։

15 Զարմ ամպարշտաց ոչ յաճախեսցէ ոստս, և արմատք պիղծք 'ի վերայ ապառաժ վիմի։

16 Ցինգ առ ամենայն ջրով յեզեր գետոց, յառաջ քան զամենայն խոտ խլեսցի։

17 Շնորհք խբրև զդրախտ յօրհնութիւնս յաւիտեան մնասցէ։

18 Կեանք մշակի բաւականի քաղցրասցին, և քան զերկուսին՝ որ գըտանիք գանձ։

19 Որդիք և շինումն քաղաքի, հաստատեն զանուն, և առաւել քան զերկուսին՝ կին * ամբիծ համարեսցի։

* Յօր. պատասէր կին. Եդեռ ըստ յոնին և ըստ Դեռ օր։

20 Գինի և երգ ուրախ առնեն
զսիրտ, և քան զերկուսին՝ սիրումն
հանճարոյ:
21 Փող և սաղմոսարան հեշտա-
ցուցանեն զնուագս, և քան զեր-
կուսին՝ լեզու քաղցր:
22 Շնորհաց և գեղոյ ցանկասցի
ակն, և քան զերկոսին՝ բուսոյ սեր-
մանեաց:
23 Բարեկամ և ընկեր՝ որ 'ի ժա-
մանակի պատահեսցեն, և քան
զերկոսին՝ կին բարի:
24 Եղբարք և օգնութիւն 'ի ժա-
մանակի նեղութեան. և քան զեր-
կոսին՝ ողորմածութիւն փրկեսցէ:
25 Ոսկի և արծաթ կացուցանեն
յոտից վերայ, և քան զերկոսին՝
խորհուրդ ընտիր գտանի:
26 Ինչք և զօրութիւն բարձր ա-
բասցեն զսիրտ, և քան զամենե-
սեան երկիւղ Տեառն:
27 Ոչ դոյ յերկիւղի Տեառն նը-
ւազութիւն իբրև զդրախտ օրհնու-
թեան:
28 Երկիւղ Տեառն և քան զա-
մենայն փառս ծածկեցին զնա:

29 Որդեակ, զկեանս մուրոդու-
թեան մի կեար. լաւ է մեռանել
քան զմուրանալ:
30 Այր, որ հայի յայլոց սեղան,
չէն կեանք նորա 'ի համար կենաց.
գարշեցուսցէ զանձն իւր այլոյն
կերակրովք:
31 Իսկ հանճարեղ այր և խրա-
տեալ զգոյշ եղիցի:
32 Ի բերան անամօթին՝ քաղց-
րասցի մայր, և յորովայնի նորա
հուր այրեսցի:

ԳԼ. ԽԱ.

1 Ո՛վ մահ, իբրև զի դառն է յի-
շատակ քո՝ մարդոյ խաղաղացելոյ
յինչս իւր.
2 Առն անվշտի և յաջողելոյ յամե-
նայնի, և որ կարող իցէ տակաւին
ընդունել կերակուր:
3 Ո՛վ մահ, բարի է դատաստան

քն՝ մարդոյ կարօտելոյ, կասեցեալոյ յուժոյ.

4 Աղճատելոյ և զբաղելոյ վասն ամենայնի, և անհաւատի և կորուսելոյ զհամբերութիւն:

5 Մի՛ երկնչիր 'ի դատաստանէ մահու. յիշեա զի առաջնոցն քոց և վերջնոցն՝ այս դատաստան 'ի Տեառնէ ամենայն մարմնոյ:

6 Եւ ընդէ՞ր դժուարիս ընդ հաճութիւն Բարձրելոյն:

7 Թէպէտ և տասն, թէպէտ և հարիւր, թէպէտ հազար ամ, չէ 'ի դժոխս յանդիմանութիւն կենաց:

8 Որդիք պիղծ լինին որդիք մեղաւորաց, և շրջօղք ընդ բնակութիւնս ամպարշաց:

9 Որդւոց մեղաւորաց եբեալ լինին ժառանգութիւն, և ընդ զաւակի նոցա հանապազորդք են նախատինք:

10 Հօր ամպարշի մեղադիր լինին որդիք, զի վասն նորա նախատեսցին:

11 Վա՜յ են ձեզ, արք ամպարիշք,

ողք բարձէք թողէք զօրէնս Աստուծոյ բարձրելոյն։

12 Եւ թէ ծնանիջիք, յանէծս ծնանիջիք։

13 Ամենայն ինչ՝ որ յերկրէ է, յերկիր երթիցէ. այսպէս ամպարիշտք յանիծից 'ի կորուստ։

14 Սուգ մարդկան 'ի մարմնոյ իւրեանց. իսկ անուն մեղաւորաց բարի ոչ, ջնջեսցին։

15 Հոգ տար վասն անուան, զի այս մնայ առ քեզ քան զհազար մեծամեծս գանձս ոսկւոյ։

16 Բարի կենաց՝ թիւ ոչ գոյ աւուրց, և բարի անուն մնայ յաւիտեան։

17 Զխրատս խաղաղութեան պահեցէք, որդեակք. բայց խմաստութիւն գանձ է թաքուցեալ. զինչ օգուտ է յերկոսեան։

18 Լաւ է մարդ՝ * որ թաքուցանէ զյիմարութիւն իւր, քան զգ-

* Յոր. մարդոյ. ուղղեցաք ըստ յունին։

մարդ՝ որ թագուցանէ զիմաստութիւն իւր։

19 Արդ պատկառեցէք 'ի վերայ իմիքի բանիւս իմով։

20 Զի ոչ է բարի զամենայն ամօթ պահել, և ոչ ամենևին ամենեցուն հաւատարմութեամբ հաճոյ լինել։

21 Ամաչեցէք 'ի հօրէ վասն պոռնկութեան,

22 Ի դատաւորէ և յիշխանէ՝ վասն յանցանաց, 'ի ժողովրդենէ և յամբոխէ՝ վասն անօրէնութեան,

23 Ի հաղորդէ և 'ի բարեկամէ՝ վասն զրկանաց, և 'ի տեղւոջէ յորում պանդխտիցիս՝ վասն գողութեան,

24 Եւ 'ի ճշմարտութենէ Աստուծոյ և յուխտէ՝ վասն սուտութեան, և 'ի հարկանելոյ զարմուէն 'ի հացս այլոց, 'ի նախատանաց տալոյ և առնլոյ *, և յայնցն՝ որ ողջոյն տացեն՝ վասն ըստութեան։

* Յոր. յառընկալոյ. «ողջոյն» ըստ յունին։

25 Ի տեսլենէ կնոջ բոցի, և 'ի դարձուցանելոյ զերեսս յաղագս նոյ.

26 Ի հանելոյ բաժնի և 'ի տրոց, և 'ի պշնելոյ առնակին կնոջ.

27 Ի քննելոյ նաժշտի նորա. և մի կար առ անկողնի նորա.

28 Ի բարեկամաց՝ վասն բանից նախատանաց. և յետ տալոյն մի նախատեր. 'ի կրկնելոյ բանից և և լսոյ. և յայտնելոյ բանից գաղտնեաց:

ԳԼ. ԽԲ.

1 Եւ եղեցես ամօթոյած Հշմարտապէս, և գտանիցես շնորհս առաջի ամենայն մարդկան. այլ մի վասն այսոցիկ ամաչեսցես, և մի առնուցուս ակն մեղանչելոյ.

2 Վասն օրինացն Աստուծոյ և ուխտի, վասն դատաստանի արդարացուցանել զամպարիշտս:

3 Յաղագս հաշուի զուսոցի և Հա-

նապարհորդաց, և վասն տաղց ժա-
ռանգութիւն այլոց։

4 Վասն ճշդութեան կշռոց և
չափուց, վասն ստացուածոց սա-
կաւուց և շատից։

5 Վասն վաճառելոյ կարասւոյ
թանկարաց. վասն խրատու որ-
դւոյ շատի, և ծառայից չարաց
վասն 'ի զկոյս նոցա արենալ*։

6 Առ կնեաւ չարեաւ՝ բարի է
կնիք. և ուր բազում ձեռք իցեն,
փակեա։

7 Զոր ինչ աւանդիցես՝ թուով
և կշռով, և տուր և առ՝ գրով։

8 Վասն խրատուց անմտից և յի-
մարի, և յետնածերոյ՝ որ դատի
վասն պոռնկութեան. և իցես խրա-
տեալ ճշմարտապէս, և փորձեալ
առաջի ամենայն կենդանւոյ։

9 Դուստր հօր գաղանի ոչնու-
թիւն է, և հոգք նորա հեռի առ-
նէ զքուն. 'ի տղայութեան նորա,

* Յօր. շատից... և վասն 'ի զբր-
կոյսն յարենալ. ՈՒՂԵՂԻՍ ԸՍ ՅՈՒ-
ՆԻՆ։

գուցէ ըստ * չափ ելանիցէ. և յորժամ ամուսնասցի, գուցէ ա-
տիցի.

10 Ի կուսութեան՝ գուցէ. սրբ-
ծիցի և 'ի հայրենիսն իւր յոչ լի-
նիցի, և յորժամ ընդ առն լիցէ,
յանցանիցէ. և յորժամ ընդ նմա
բնակեալ լիցէ, գուցէ աղտեղասցի:

11 Ի վերայ անամօթ դատեր՝ հաս-
տատեա պահպանութիւն. գուցէ
առնիցէ քեզ ոսոհարութիւն 'ի
թշնամեաց, խօսս 'ի քաղաքի և ե-
կակոչ ժողովրդեան, և յամօթ առ-
նիցէ զքեզ 'ի բազմամբոխի:

12 Մի հայիր 'ի գեղեցկութեան
ամենայն մարդոյ. և 'ի մէջ կանանց
մի նստիցիս:

13 Զի 'ի հանդերձից ծնանիցի
ցեց, և 'ի կնոջէ չարութիւն:

14 Լաւ է չարութիւն առն՝ քան
զկին բարեբարոյ, և զկին՝ որ յա-
մօթ առնէ 'ի նախատինս:

15 Արդ յիշեցից զգործս Տեառն,
և զոր ինչ տեսի՝ պատեցից. բա-
նիւք Տեառն գործք նորա:

* Յոր. պոխուէ ըստ:

16 Արեգակն լուսաւորելով ընդ
ամենայն հայեցաւ, և փառաւք
Տեառն լի գործք նորա։
17 Զարար սրբոց Տեառն պատ-
մել զամենայն սքանչելիս նորա՝ զոր
հաստատեաց Տէր ամենակալ, հաս-
տատել 'ի փառս նորա ամենայնի։
18 Զանդունդս և զսիրտս քըն-
նեաց, և զնորագիտութիւն նորա
'ի միտ առ։
19 Քանզի ծանեաւ Բարձրեալն
զամենայն խիղճ մտաց, և հայեցաւ
'ի նշանս յաւիտենից. պատմելով
զանցեալն և որ յետոյն լինելոց է,
և յայտնէ զհետս գաղտնեացն։
20 Ոչ զանց 'ի նմանէ ամենայն
մտածութիւն, ոչ թաքեաւ 'ի նը-
մանէ և ոչ մի բան։
21 Զմեծութիւնս իմաստութեան
իւրոյ զարդարեաց. որ * է յառաջ
քան զյաւիտեանս, և յաւիտեան.
ոչ յաւել և ոչ նուազեաց.
22 Եւ ոչ կարօտացաւ ումեքիւ
խորհրդակցաւ։

* Յոր. ոչ է. ՈՒՂՂԵՑԱՒ ԸՍՊ ՅՈՒՆԻՆ.

23 Իբրև զի ամենայն գործք նորա
ցանկալիք, և որպէս փայլակն է
տեսանել։
24 Ամենայն այս կենդանի է, և
մնայ յաւիտեան յամենայն պէտս։
ամենայն ինչ լսէ։*
25 Ամենայն ինչ կրկին՝ մի ընդ-
դէմ միոյ, և ոչ ինչ արար Թերի։

* Յոբ։ լսի։ ՈՒՂՂԵՅԱՒ ԸՍՊ ՅԱՒՆԻՆ։

ԹՈՒՂԹ

ԵՐԵՄԻԱՅ

Պատասխանի Ղղեռոյն՝ զոր էպ պանէլ Երէմիա մարգարէ առ գերէալսն 'ի Բաբէլն, որպէս պատմէ Նոյա հրաման էպ Տէր։

1 Վասն անօրէնութեան մեղացն, զոր յանցեալք դուք առաջի Աստուծոյ, վարեալքք դուք 'ի գերութիւն 'ի ձեռս Նաբոգոդոնոսորայ արքայի բաբելացւոց ծառայի Տեառն.

2 Եւ եղիջիք դուք անդ ամս բազումս՝ երկայն ժամանակս խբրև 'ի դարս եօթն. յետ այսոցիկ հանիցէ զձեզ անտի խաղաղութեամբ,

3 Բայց ասա անդ տեսանիջիք դուք յերկրին բաբելացւոց. զիս արծաթեղէնս ոսկեղէնս փայտեղէնս և քարեղէնս 'ի վերայ ուսոց

Իսրեանց բարձեալ բերիցեն, ահա արկանել հեթանոսաց։

4 Զգոյշ լինիջիք՝ գուցէ և գուք նմանիցիք այլազգեացն, երկնչել 'ի նոցանէ,

5 Իբրև տեսանիք ամբոխ բազում յայսկոյս յայնկոյս՝ զի խաղայցեն և երկիր պագանիցեն նոցա յե-տուստ և յառաջուստ, բայց գուք միայն զայս եղեալ ուղիջիք 'ի մտի՝ եթէ քեզ միայն, Տէր, պարտ է երկիր պագանել՝ որ արարիչդ ես ամենայնի։

6 Զի Հրեշտակն իմ ընդ ձեզ իցէ հանապազ, և ես ինձէն խնդրեցից զանձինս ձեր 'ի նոցանէ։

7 Այլ նոցա լեզուքն քերեալ են 'ի հիւսանց խարաբուզս, և ինքեանք արծաթասպառք և ոսկեսպառք են, պատեալք 'ի սուտ պատատանս. ոչ խօսք 'ի բերանոց նոցա առ 'ի շրթանց շարժել, և ոչ գնացք ոտից՝ առ 'ի քայլն փոխելոյ։

8 Այլ զբրէն զարդասէր աղջկանց լրկտեաց շքթելոյ՝ առեալ զոսկին

կոշկոՃեալ, զՁլուխս դիցն իւ-
բեանց պսակօք զարդարեն։
9 Եւ իցեն Ժամանակք, զի քուրմ-
քըն նոցա առեալ զոսկին և զար-
ծաթն՝ ոչ միայն յիւրեանց պէտս
մաչեն, այլ բազում անգամ և
գոռեհիկ բոզացն իւրեանց աղտե-
ղութեան կապէնս մատուցանեն։
10 Զի թէպէտ և զարդարեն ըզ-
գիսն իւրեանց զոսկեղէնս և զար-
ծաթեղէնս և զպայտեղէնս յաղ-
գի ազգի * զարդ իբրև զմարդիկ,
11 Սակայն նոքա անդէն 'ի ներ-
քուստ 'ի ներքս յիւրեանց Ժան-
կոյ անտի մաչեն, և ցեցակերեալք
և բոտոտակերեալ ասպականն։
12 Թէպէտ արկանեն ծիրանիս, և
Ճեպս կան զօրհանապազ, զտան փո-
շին՝ որ յերեսաց վերայ նստի՝ կոխել
կորզելով, այն իջեալ անդէն վաղ-
վաղակի թանձրացեալ նստեալ 'ի
վերայ, յիմարակերպ ** զպաՃու-
Ճագեղ նշմարանն դարձուցանէ։

* Յոր. յաղգի զարդ։
** Յոր. յիմակերպ։

13 Արդ և ցուպ ևս եդեալ 'ի ձեռն իբրև մարդոյ, նստի իբրև իշխան՝ գաւազան 'ի ձեռին, կամ որպէս դատաւոր աշխարհի միոջ. և բնաւ զայն իսկ, որ 'ի նոյն ինքն 'ի գլխովին մեղանչել մարանչին, և քշել 'ի յանձնէ ոչ կարէ:

14 Տապար առ նմին եդեալ, վաղակաւոր յաջոյ ձեռին, և զանձն իւր 'ի գողոց կամ յաւազակաց պահել ոչ կարէ. յայսմ ամենայնի գիտասջիք՝ եթէ չէն նոքա աստուածք:

15 Մի երկնչիք 'ի նոցանէն, և մի զարհուրեսջիք. զի զոր օրինակ ասնօթ մի ջաղջախ անկիտան՝ անկեալ գնիցի 'ի տան տեառն իւրոյ, այսպէս են և դիքն նոցա. բեւեռեալ կան շուրջ զիւրեամբք՝ առ երկիւղն գլորելոյ:

16 Այլ նոցա լի են տան փոշովն՝ որ առ ոտսն յառնէ մոխիրն մոտնելեացն և ելանելեացն:

17 Եւ զոր օրինակ առն միոջ ջաղագործի և մահապարտի՝ կապե-

էր 'ի բանտս աքբունի, այնպէս
շուրջ զնոքաւք զսրահն փակեալս և
կարկեալս և ամրացուցեալս պա-
հեն քուրմքն իւրեանց՝ նգաւք և փա-
կոցաւք և դռնափակաւք առ երկիւ-
ղի, զի մի 'ի գողոց և յաւազակաց
կապտեսցի։

18 Լնուն զտունսն Ճրագաւք, ապա
ինքեանք իսկ յայսմանէ վկայեն՝ է-
թէ ոչ այնու և ոչ առանց այնր ինչ
կարեն տեսանել, և են նոքա իբրև
անօրէք ընդ ձեղուամբ հարեալ։

19 Այլ եթէ 'ի փոր նոցա հայիք,
ազգի ազգի սողունք և բոտոքք և
ցեցք և ճրճիք 'ի նոցանէ և 'ի հան-
գերձից նոցա կերակրին, և նոքա
ինչ ոչ զգան։

20 Թխացեալ և աղտեղեալ են
գոյնք երեսաց նոցա 'ի ճենճերոյ
անտի և 'ի ծխոյ, որ 'ի պէտս ըն-
տանեացն գործի հանապազ։

21 Ի վերայ գլխոյն և 'ի վերայ
ամենայն մարմնոյն՝ չղջիկանքն և ծի-
ծառունքն և ճնճղուկքն և կուզքն և
մկունքն ելևէջ առնեն հանապազ։

22 Ցայսմանէ գիտասջիք՝ եթէ նո-

քա չէն ասատուածք, և մի երկրն-
չէք դուք 'ի նոցանէն, և մի զմատա-
ածիցէք զնոսա ամենեքին:
23 Զի զարծաթն և զոսկին, որ պա-
տեալ է զնոքօք առ զարդուէ, զի
եթէ ոչ ոք հանապազ զԺանին 'ի
նոցանէ արու կարասօք կոկէ կոր-
զէ և մաքրէ, և զփայլէն իսկ ոչ
փայլէն. քանզի մինչ կռէինն իսկ
զնոսա *, ոչ զդայլն ինքեանք, և ոչ
ցաւէր ինչ նոցա:
24 Եւ մեծագնի ևս գնեն զնոսա,
և չունչ ոչ գոյ 'ի նոսա:
25 Անոսա անձեռս, և առեալ
քրմացն 'ի վերայ ուսոց իւրեանց
կրեն, և բերեն զխայտառականս
ամենեցուն իւրեանց: Յոյց առնեն
մարդկան և ինքեանք յանձինս իւ-
րեանց ամաչեն. և զգուշութեամբ
ըսպասս ունին նոցա, զի մի մարդ-
կան առաջի կործանիցին. Զի գի-
տեն եթէ ինքնեանք անձամբ զան-
ձինս իւրեանց չկարեն կանգնե-
ցուցանել:

Յոր. զնոքա:

26 Եւ թէպէտ ոք առնու կանգնէ զնոսա, ինքեանք յինքեանց վերայ ոտից ոչ կարեն կալ. զի յայսկոյս յայնկոյս գրգռեալով դեղեին։ Կողմնեցուցանեն զնոսա իբրև ըզդիակունս, և իբրև մեռելոց՝ առաջի դնեն զոհս և զողջակէզս, և կայ առաջի նոցա սրբոյն և կայ։

27 Ապա առնուն զնա քուրմքն իւրեանց յիւրաքանչիւր պէտս մատչեն։ Դարձեալ կանայք նոցա առնուն և ապրիստեն* զնոսա, և այրեայն և որբոյն և աղքատին անտի մատն ինչ ոչ հանեն։

28 Աղտեղութեամբ և պղծութեամբ և անխտիր դաշտանաւ մերձենան 'ի նոսա։ Գիտեալով գիտասջիք յայսմանէ՝ թէ չեն նոքա աստուածք. մի երկնչիք 'ի նոցանէ, և մի փոյթ առնէք զնոցանէ։

29 Զի ուստի անուանին աստուածք արծաթեղէնք և ոսկեղէնք և քարեղէնք, դաշտանիկք սպասաւորք են նոցա։

* Յոր, ապախտեն։

30 Քուրմքն նստին 'ի տունս իւ-
րեանց, հերս քերծեալ՝ քերծեալ
մօրուս նստին առաջի դիցն։
31 Ոնման և ողբան և գուժեն
իբրև կմախս մեռելոց։
32 Դարձեալ յորժամ զատ գտա-
նեն, զերծուն առնուն զթամբա-
տեակսն՝ զոր ուրուք ուրուք սր-
կեալ էր զնոքօք, և բաշխեն կա-
նանց և որդւոց իւրեանց։
33 Եւ ոչ, եթէ չար ինչ յումեքէ
գտանեն, փոխարէն կարեն հանել։
34 Եւ ոչ, եթէ բարիս ինչ ոք
առնէ, երախտիս մարթեն հատուց-
ցանել. եթէ ոք նոցա ուխտս դնէ,
և ոչ հատուցանէ *, ոչ կարեն խըն-
դրել։
35 Զի և 'ի մահուանէ այր մի ոչ
կարեն փրկել. ոչ զանաւադն 'ի
հարստէ անտի, և ոչ զգլեկեանն 'ի
զլկողէ անտի ապրեցուցանել։
36 Ոչ կարեն բանալ զկուրութիւն
կուրին, և ոչ օգնել տագնապելոյն։
37 Այրեոյն ոչ գիտեն ողորմել,

* Ի լատինս կատարէ.

և որբոյն ոչ կարեն բարի առնել։
38 Ոչ կանգնել կարեն թագաւոր մի, և ոչ կործանել. ոչ մեծացուցանել կարեն, և ոչ աղքատացուցանել։
39 Քարանց առապարի նմանեալ են, փայտեղէնքն և ոսկեղէնքն և արծաթեղէնքն, և որք սպասաւորքն են նոցա ամենեալից շրջին հանապազ,
40 Յորժամ ինքեանք քաղդէացիքն անարգեն և արհամարհեն զնոսա։ Զի յորժամ տեսանեն պապանծեալ համբացեալ, և ոչ ինչ տայ պատասխանի, անկեալ թաւալեն առաջի Բելայն, և ազաչեն խօսել նմա ընդ նոսա։
41 Իբրև թէ կարող ինչ ելցէ խօսել նա ընդ նոսա։ Եւ այնչափ անմիտ են, զի ոչ կարեն թողուլ լքանել, և բաց գնալ 'ի նոցանէ։
42 Արդ և կանայք նոցա ուխտաւոր լինին, և նստին յանցս Ճանապարհաց՝ ծիր ածեալ շուրջ զիւրեամբք, և լարս դահակեալ. և ծխեն 'ի վերայ Ճանապարհացն ըստ թեփ խնկախառն։

45 Յորժամ ոք 'ի նոսա ակնա-
կալութիւն լինիցի յանցաւորաց ճանա-
պարհին, և մոցէ առ նա, եկանէ
զընկերն իւր նախատէ՝ իբրու թէ
ինքն յաղեցաւ, և իւր լարքն խզե-
ցան, և ընկերն ոչ յաղեցաւ, և ոչ
եղև արժանի, և ոչ լար նորա խը-
զեցաւ։

44 Ամենայն ինչ որ գործի 'ի ձեռս
նոցա խաբէութեամբ. և այլանդա-
կութեամբ. արդ զնա՞րդ մարթի
անուանել կամ կարծել կամ հա-
մարել զնոսա աստուածս։

45 Ի ձեռաց ճարտարաց՝ արծա-
թագործաց գործեալ է, ոչ ինչ
զայն ինչ զինչ ինքեանք կամին՝ լի-
նի, այլ զինչ ճարտարքն կամին՝
առնեն զնոսա։

46 Ինքեանք իսկ որ առնեն զնո-
սա՝ կարճականք են, և ոչ բաղում
աւուրց, և ոչ բաղում ժամանա-
կաց կարեն լինել. իսկ արդ որ
ստեղծեալ են 'ի նոցանէ, նոքա աս-
տուածք կարեն առնուանել կոչել։

47 Բայց այնչափ է զի թողին նո-
քա ստութի և այլանդակութիւն

և նախատինս 'ի վերայ յեսնոց իւ-
բեանց։

48 Արդ յորժամ գայ 'ի վերայ
նոցա չարիք պատերազմի, 'ի խոր-
հուրդ մտանեն քուրմքն, յինչ
այրս, կամ յոր ծակս, կամ յինչ
քարածերսս մտցեն թաքիցեն, և
ապրեսցին նոքօք հանդերձ 'ի չա-
բեաց պատերազմին։

49 Իսկ արդ զնաիրդ մարթի ածել
զմտաւ՝ թէ նոքա ստուռածք են,
որ զանձինս ոչ կարեն ապրեցու-
ցանել 'ի չարեաց պատերազմի։

50 Բայց սակայն և դոքա ոսկե-
ղէնքդ՝ յետ սակաւ ժամանակաց
դոցին իսկ հեթանոսացդ և թա-
գաւորաց դոցա յայտնելոց են,
թէ սուտ և մնոտի և ձեռագործք
մարդկան էին։

51 Եւ ոչ են ստուռածք, և գործ
իսկ ոչ գոյր 'ի նոսա։

52 Թագաւոր մի յերկրի միոջ
կանգնել ոչ կարեն, անձրև մի 'ի
կարօտութեան ժամանակի մար-
դկան ինքուցանել ոչ կարեն։

53 Դատաստան մի 'ի մէջ երկուց

ուսխաց ոչ կարեն վճարել, և ոչ զզրկեալ մի փրկել 'ի բռնաւորէ իւրմէ. և են իբրև ագռաւք 'ի յերկինս և ընդ երկիր, օդոյ առեալ տարապարտուց թռուցեալ։

54 Այլ յորժամ հուր անկանի 'ի տուն դիցն ոսկիապատացն և արծաթապատացն և փայտեղինացն, քուրմքն վաղվաղակի լքեալ զնոսա՝ ինքեանք 'ի փախուստ դարձցին. նոքա լքեալք իբրև մի մի 'ի պրչակաց, անդրէն 'ի ներքս այրեսցին *։

55 Այլ թագաւորաց կամ պատերազմողն զդէմ իսկ ոչ կարեն ունել. իսկ արդ զինարդ մարթիցի իմանալ կամ կարծել՝ թէ նոքա աստուածք իցեն։

56 Որ յաւազակաց կամ'ի գողոց զանձինս ոչ կարեն ապրեցուցանել՝ դիքն փայտեղէնք և արծաթեղէնք և ոսկեղէնք։

57 Յորոց թէ մատեաւ ոք զերծ առ զոսկեանն կամ զհանդերձիկն,

* Յոյ. այրեսցի։

և երթայ գնայ յանհոգս. և նոքա անձին ինչ ոչ կարեն օգնել։

58 Ապա թէ այդպէս, լաւ է մարդոյ՝ որ ցուցանէ զանձին քաջութիւն, կամ անօթի մի պիտանացու՝ որ կայ 'ի տան տեառն իւրոյ և պարծանք են տեառն իւրում, քան զայնպիսի սուտ աստուածսն։

59 Արեգակն և լուսին և աստեղք յորժամ 'ի պէտս ինչ առաքին, հպատակագոյնք են յարբանեկել մարդկան քան զնոսա։

60 Այնպէս և փայլատակունք երկնելիք՝ դիւրին են տեսանել, և շունչք հողմոց ընդ ամենայն երկիր շնչեն։

61 Եւ ամպք յորժամ առնուն հրաման 'ի Տեառնէ՝ հասանել 'ի վերայ երեսաց երկրի, արագ արագ զհրամանն կատարեն։

62 Եւ հուրն որ առաքի 'ի վերուստ՝ հաչել և մաչել զերինս և զանտառս, արագ արագ զհրամանն կատարէ։ Այլ այրք ոչ զօրութեամբ՝ ոչ տեսանելով՝ միում ուրեք նոցա նմանեն։

63 Վասն այսորիկ ոչ կարծել և ոչ կոչել պարտ է զնոսա աստուածս. զի ոչ դատաստան մի վճարել կարեն, և ոչ բարի մի ինչ մարդկան առնել կարեն:

64 Այսուհետև գիտասջիք՝ զի չեն նոքա աստուածք, և մի երկնչիք 'ի նոցանէ:

65 Զի ոչ թագաւորաց անիծանել և ոչ օրհնել կարեն:

66 Նշանս յերկնից հեթանոսաց ցուցանել ոչ կարեն, և ոչ ծագել արեգականպէս կարեն, և ոչ լոյս տալ լուսնապէս գիտեն:

67 Ճըճիդ լաւ է քան զնոսա, որ իբրև ընդ ձեռն եղանէ մարդոյ՝ յամուրանեկանի, և զանձն իւր ապրեցուցանէ:

68 Այլ և ոչ իւիք պարտ է զնոսա համարել՝ թէ իցեն նոքա աստուածք. վասն այսորիկ մի երկնչիք դուք 'ի նոցանէ:

69 Զի զոր օրինակ խալամ մի 'ի պարտիզի առ ակնհարկ կանգնեալ, այնպէս և դիքն նոցա յոչ ինչ կանգնեալ են փայտեղէնք ոսկեապատքն և արծաթապատքն նոցա:

70 Զոր օրինակ կոխոզ ինչ կանգ-
նեալ ուրեք, և ամենայն թռչուն
'ի վերայ ծրտիցէ, կամ մեռեալ՝
որ անկեալ դնիցի 'ի խաւարի,
սոյնպէս և գիքն նոցա։

71 Ի ծիրանեաց անտի փտելոց,
և 'ի ցեցակեր հանդերձէ անտի գի-
տասջիք՝ զի չեն իսկ աստուածք.
զի և նոքին իսկ աստուածքն բոտո-
տակեալք լինելոց են վասն նախա-
տանաց աշխարհիս։

72 Լաւ է մարդոյ, որոյ ոչ գոն
կուռք. գոնէ 'ի նախատանաց ապ-
րեսցի նա յընկերաց իւրոց։

ՎԵՐՋ